ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
(մասնագիր և առարկայական նկարագրեր)

ԳԱՎԱՌ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....3

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը.....5
Ծրագրի նկարագիրը.....6
ՄԱՍ Ի. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ....18
ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ 37
1. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ 37
2. Մասնագիտացված պատրաստման դասընթացներ 40
2.1. Պարտադիր դասընթացներ 40
2 2. Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ 54
3. Հետազոտական կրթամաս 61
4. Դասընթացների քարտեզագրում 66

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ուսանողներ,

դուք սովորում եք բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանում՝ մագիստրատուրայում, ինչը ենթադրում է նոր պահանջներ, առավել պատասխանատու և լուրջ մոտեցում, հետևողական ու նպատակային աշխատանք, ուսումնական և գիտահետազոտական գործընթացների զուգակցում, ինտեգրված ծրագրերից, կրթական տարբեր ծառայություններից օգտվելու հնարավորություններ:

Դուք պետք է խորացնեք ձեր տեսական և պրակտիկ գիտելիքները, շարունակաբար ընդլայնեք աշխարհայացքային և մասնագիտական իմացության սահմանները, ձեռք բերեք նոր հմտություններ:

Անգլերեն լեզու և գրականություն մագիստրոսական կրթական ծրագիրն առավել գիտատար է, և ներառում է պարտադիր ու կամընտրական դասընթացներ, մանկավարժական և հետազոտական պրակտիկաներ, մասնագիտական թեզի կատարում և ամփոփիչ ատեստավորում: Հենքային դասընթացները և սովորողի ընտրությամբ՝ կամընտրական մոդուլները տեղ են գտնում մագիստրոսի անհատական պլանում և ուսումնասիրվում նրա կողմից: Հիմնական և լրացական դասընթացները մագիստրատուրայի ուսանողին նախապատրաստում են ոչ միայն արդյունավետ մասնագիտական գործունեության, այլև հետբուհական ու շարունակական կրթության համար: Մագիստրատուրայում փոխվում ու հարստանում է կրթության բովանդակությունը, բազմազան են դառնում ուսուցման և հետազոտական աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդները:

Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայում գործում են կրեդիտային համակարգը, սովորողների գիտելիքների ստուգման և բազմագործոն գնահատման կարգը: Կարևորվում են մագիստրոսի և գիտական ղեկավարի համագործակցությունը, մագիստրոսական թեզի թեմայի ճիշտ ընտրությունը, թեզի պատրաստումն ու պատշաճ ձևով պաշտպանությունը:

Մագիստրոսական կրթական ծրագիրը նախատեսում է ինքնուրույն հետազոտական աշխատանքի մեծ ծավալ, մասնագիտության արդի հիմնահարցերի առավել խոր ուսումնասիրություն՝ հաշվի առնելով գիտության, կրթության, մշակույթի, սոցիալական համակարգի, տեխնիկայի, նորագույն տեխնոլոգիաների, արհեստական բանականության զարգացման միտումները և, իհարկե, կրթության որակի ապահովման հրամայականը:

Ուստի, դուք պետք է դրսևորեք շահագրգիռ ու ստեղծագործական մոտեցում, ներգրավվեք նոր գիտական հայեցակարգերի ոլորտ և ձեռք բերեք ինքնուրույն գիտահետազոտական ու մանկավարժական աշխատանքի փորձ:

Դուք պետք է նպատակային օգտագործեք մագիստրատուրայում ուսանելու տարիները և դառնաք որակյալ մասնագետներ:

Մաղթում ենք ձեզ հաջողություն, որի գրավականը որակյալ կրթությունն է:

ԳՊՀ ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագիրը և դասընթացների նկարագիրը նախատեսված է ‹‹Անգլերեն լեզու և գրականություն›› մասնագիտությամբ սովորող մագիստրոսի կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին մատչելի դարձնելու համար: Այն պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես մասնագիտության ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը. շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ՝ պարապմունքի ձևերի, դասընթացի խնդիրները՝ արտահայտված ելքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և սովորողների գիտելիքների ստուգման ու գնահատման մեթոդներն ու չափանիշները:

Անգլերեն լեզու և գրականություն
Մասնագիտական կրթական ծրագրի նկարագիրը

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Անգլերեն լեզու և գրականություն /**011401.21.7/**
2. Բուհը	Գավառի պետական համալսարան
3. Ծրագիրը հավատարմագրված է	-
4. Շնորհվող որակավորումը	մանկավարժության մագիստրոս՝ անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ
5. Կրական աստիճանը	Մագիստրատուրա
6. Ուսումնառության լեզուն	Անգլերեն, հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա.

- բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան,
- նախորդ կրթական աստիճանում ցուցաբերած բարձր առաջադիմություն,
- մասնագիտական մանկավարժական գիտելիքներ
- օտար լեզուների իմացություն
- համակարգչային ծրագրերի իմացություն:
- Ընդունելությունը կատարվում է ընդունելության համալիր քննության հիման վրա:

9. Ավարտելու պահանջները.

Ծրագրի շրջանավարտը պետք է ունենա.

- **120 կրեդիտ, ինչպես նաև հաջողությամբ պաշտպանի մագիստրոսական թեզը:**

Մանկավարժության (Անգլերեն լեզու և գրականություն) մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար սովորողը հաջողությամբ լրացրել է 120 կրեդիտ ուսումնական բեռնվածություն՝ ներառյալ 12 կրեդիտ ծավալով մագիստրոսական թեզը և 72 կրեդիտ ծավալով մասնագիտական դասընթացների կրթամասը: Ծրագրի ելքային կրթական արդյունքները ներառում են հետևյալ մասնագիտական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները.

Մասնագիտական գիտելիք և իմացություն

Մասնագիտական կրթական ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

պարզաբանելու արդի մանկավարժական և հոգեբանական տեսությունների վրա հիմնված կրթության և դաստիարակության հիմնախնդիրները, ուսուցման նորագույն մեթոդներն ու մոտեցումները, կիմանա գիտահետազոտական աշխատանքի մեթոդաբանության, ներառական կրթության, լեզվաբանական և գրականագիտական հիմնարար հետազոտություն-ների ուսումնասիրման հիմնական սկզբունքները, անգլերենի, անգլիական և անգլիախոս երկրների գրականությունների զարգացման միտումները, լեզուների համեմատական, տիպաբանական ու միջմշակութային հաղորդակցական առանձնահատկությունները:

Բուն մասնագիտական կարողություններ

Ուսանողը կկարողանա՝

կիրառել մանկավարժահոգեբանական ժամանակակից մեթոդները, ինքնուրույն կատարել գիտահետազոտական աշխատանք մասնագիտական մանկավարժության ոլորտում, ներկայացնել ներառական կրթության, լեզվաբանական և գրականագիտական հետազոտությունների ուսումնասիրման հիմնական սկզբունքները, անգլերենի, անգլիական և անգլիախոս երկրների գրականությունների զարգացման ընթացքն ու առանձնահատկու-

թյունները, ցուցաբերել լեզուների համեմատական, տիպաբանական ուսումնասիրություններ կատարելու ունակություններ, բնագավառի վերաբերյալ խոր և համակարգված գիտելիքներ և դրանք կիրառել միջմշակութային ու մասնագիտական հաղորդակցման ոլորտում:

Ընդհանրական փոխանցելի կարողություններ

Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ցուցաբերելու մանկավարժահոգեբանական մեթոդները մասնագիտական գործունեության մեջ կիրառելու, մանկավարժության և լեզվաբանության տարբեր ոլորտներում հետազոտական աշխատանք կատարելու, տեղեկատվական տարբեր աղբյուրներից օգտվելու, տարբեր ժանրերի և բնույթի նյութեր ներկայացնելու, անգլերեն լիարժեք հաղորդակցվելու հմտություններ, որոնք անհրաժեշտ են բարձրագույն կրթության երրորդ մակարդակում ուսումը շարունակելու համար:

10. **Ծրագրի նպատակները և խնդիրները**

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրի նպատակն է պատրաստել անգլերենից և անգլիական գրականության պատմությունից խոր գիտելիքներ ունեցող, լեզվաբանական և գրականագիտական ժամանակակից մոտեցումներին, մանկավարժական և կրթական տեխնոլոգիաներին տիրապետող և դրանք կրթական գործընթացում կիրառելու հմտություններ ունեցող մանկավարժության մագիստրոսներ:

Առաջադրված խնդիրները՝

Ուսումնադաստիարակչական բնագավառում.

ա) Մասնագիտության առարկաների ուսուցման գործընթացի ապահովում:

բ) Գիտականորեն հիմնավորված ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների և միջոցների (տեսալսողական, հաղորդակցական, տեղեկատվական և մուլտիմեդիական) օգտագործում:

գ) Ուսուցման արդյունքների պլանավորում, կանխատեսում, սովորողների դաստիարակում և զարգացում, նրանց ուսումնական ձեռքբերումների վերահսկում և հաշվառում՝ արդյունքների գնահատման ժամանակակից մեթոդների և միջոցների կիրառմամբ:

դ) Սովորողների ինքնուրույն ուսումնառության պլանավորում, կազմակերպում և ուղղորդում:

ե) Սովորողների արժեքային ուղղորդվածության, հանդուրժողականության, քաղաքացիական, մարդասիրական և հայրենասիրական համոզմունքների ձևավորում:

զ) Մասնագիտական - մանկավարժական գործունեության մեջ կրթական, դաստիարակչական և զարգացման նպատակների իրականացմանը նպաստող կրթական և հոգեբանական միջավայրի ստեղծում և պահպանում: Սովորողների՝ տարբեր տարիքային փուլերում անատոմիական– ֆիզիոլոգիական, ֆիզիկական և հոգեկան զարգացման պայմանների ապահովում և հիմնական օրինաչափությունների հաշվառում:

Մեթոդական գործունեության բնագավառում.

ա) Մասնագիտական գործունեության ոլորտի տեղեկատվության հավաքում, համակարգում, վերլուծում և օգտագործում:

բ) Կրթական ծրագրի, ուսումնամեթոդական ապահովման հիմնավորված ընտրություն և դրանց ուղղորդում ուսումնական կոնկրետ գործընթացին:

գ) Ուսումնական պլանին համապատասխան ուսումնական պարապմունքների պլանավորում՝ առարկայական ծրագրերի թեմաների և բաժինների առանձնահատկությունների հաշվառմամբ:

դ) Փորձարարական-հետազոտական գործունեության իրականացում՝ կապված սովորողների ուսուցման, դաստիարակության, զարգացման, անձի ձևավորման, դրանց առանձնահատկությունների ուսումնասիրության, սովորողների գործունեության խթանման, ինչպես նաև տեսական և գործնական մանկավարժական կազմակերպչական, շտկողական, դիագնոստիկ, մեթոդական, խորհրդատվական խնդիրների հետ:

ե) Հաշվետվությունների, մեթոդական զեկուցումների, հոդվածների պատրաստում:

զ) Բուն մանկավարժական գործունեության պլանավորում, կազմակերպում, վերլուծություն և

կատարելագործում : Սոցիալական-մանկավարժական գործունեության բնագավառում. ա) Սովորողների սոցիալականացման, մասնագիտական կողմնորոշման գործընթացների մանկավարժական և հոգեբանական ուղեկցության իրականացում, նրանց նախապատրաստում մասնագիտության գիտակցված ընտրության՝ ընդունակություններին և հակումներին համապատասխան: բ) Սովորողների միջանձնային և միջկոլեկտիվային հարաբերությունների կազմակերպում, կանոնավորում ու զարգացում: գ) Դաստիարակության գործընթացում սովորողների ծնողների, ինչպես նաև սոցիալական հաստատությունների հետ համագործակցում: Մշակութային – լուսավորչական գործունեության բնագավառում. ա) Սովորողների ընդհանուր մշակույթի ձևավորում: բ) Ուսումնական հաստատությունների սոցիալական և մշակութային միջավայրի ձևավորում և կազմակերպում: Կազմակերպչական գործունեության բնագավառում. ա) Սովորողների ուսումնական և արտաուսումնական գործունեության կազմակերպում, ղեկավարում, դրանց արդյունքների ամփոփում և գնահատում: բ) Ուսումնական գործընթացում սովորողների առողջության և անվտանգության ապահովում: գ) Մասնագիտական խնդիրների լուծման համար հասարակական և կրթական կազմակերպությունների հետ սովորողների և ծնողների կոլեկտիվների փոխհամագործակցության կազմակերպում: դ) Ուսումնական հաստատության թղթաբանության վարում, փաստաթղթաշրջանառության իրականացում:
11. Կրթական ծրագրի մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը
Ա. Բուն մասնագիտական գիտելիք և հմտություն
Ա1. ***կիմանա*** նկարագրել տեղեկատվական և արհեստական բանականության տեխնոլոգիաների կառուցվածքը ու դերը, արհեստական բանականության գործիքակազմը և նրա դերը մասնագիտական գիտահետազոտական գործունեության մեջ ***կտիրապետի*** գիտահետազոտական, կրթական և բիզնես միջավայրերում ԱԲ և ՏՏ տեխնոլոգիաները ինտեգրելու, նորարարական լուծումներ գտնելու, արհեստական բանականության մոդելների ստեղծած արդյունքները մեկնաբանելու հմտություններին, ***կիմանա*** դասախոսությանը (սեմինարին, գործնական աշխատանքին) նախապատրաստվելու սկզբունքները, ձևերը և եղանակները, ***կտիրապետի*** գիտամեթոդական, մասնագիտական առումներով համագործակցելու, ինքնուրույն որոնողական-հետազոտական գործունեությունը ղեկավարելու սկզբունքներին:
Ա 2. *կիմանա* գիտական մեթոդաբանության հիմնական հասկացությունները, տվյալների հավաքագրման էմպիրիկ և տեսական մեթոդները, կրթական համակարգի բարեփոխումների ներկա ռազմավարության էությունը, նոր կրթակարգերը, կրթական չափորոշիչները, կրթության, հանրակրթության մասին և մյուս օրենքները, գիտական համատեքստում փաստարկների ներկայացման, տեքստի կապակցվածության ապահովման, տեղեկատվության արդյունավետ ամփոփման մեթոդները, կհասկանա տեսական մեթոդների էությունն ու առանձնահատկությունները, հետազոտական աշխատանք ներկայացնելու հիմնական ձևերը,

կտիրապետի հետազոտության նպատակն ու դրանից բխող խնդիրները հիմնավորելու և մեթոդներ ընտրելու, գիտական աշխատանքի ձևակերպման նորմերն ու կանոնները կիրառելու հմտություններին, կտիրապետի կրթական հաստատությունների գործունեության բարեփոխումների ռազմավարությանը, որը անհրաժեշտ է ապագա մանկավարժին իր հետագա գործունեության ընթացքում, ապացույցների, փաստերի, տրամաբանության վրա հիմնված հստակ և համոզիչ փաստարկների ձևակերպման հմտություններին
Ա 3 ***Կիմանա*** ներառական կրթության էությունը, կրթական արժեքների աստիճանակարգը, հաղորդակցման բարելավման ռազմավարությունը, տարբեր երկրներում կրթական համակարգերի յուրահատկությունները, առավելությունները, դրական և թերի կողմերը, կհասկանա արդի կրթության համակարգերի կազմակերպման մեթոդաբանությունը, իրավական հենքը, մարտահրավերները, տեխնոլոգիաները, ուսուցման որակի առանցքային դրույթները, անձի էությունը մեկնաբանող մի շարք հոգեբանական տեսությունների հայեցակարգերի բովանդակությունը, ***կտիրապետի*** ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքների կազմակերպման հմտություններին, մանկավարժական արժեբանության, հետազոտության մեթոդաբանական մոտեցումներին, հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հմտություններին, ***կտիրապետի*** տարբեր երկրներում կրթական համակարգերի, ուսուցման կազմակերպման ձևերի ուսումնասիրման մեթոդներին ուսուցմանը, դաստիարակությանը, զարգացմանն ու սոցիալականացմանն ուղղված արդի մոտեցումների, մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառմամբ դասերի պլանավորման, իրականացման, գործընթացի կառավարման հմտություններին:
Ա ***4 կիմանա*** անգլերենի ակադեմիական բառապաշարի կիրառության առանձնահատկությունները, կտիրապետի ակադեմիական անգլերենով վիճակագրական տվյալները վերլուծելու, գաղափարներ արտահայտելու, վարժ խոսելու, մտքերը հստակ շարադրելու, վերլուծելու հմտություններին, Խորությամբ կիմանա անգլերենի լեզվական համակարգը (C2 մակարդակ**),** *կտիրապետի* համապատասխան գիտելիքների՝ Cambridge English, Proficiency (CPE) միջազգային քննությունը հանձնելու համար, *կիմանա* գործարար անգլերենի հիմնական բառապաշարը, միջազգային բիզնես միջավայրում կիրառվող հաղորդակցական նորմերը, ***կտիրապետի*** փափուկ հմտությունների (soft skills)՝ համոզիչ խոսք կառուցելու լեզվական հնարներին, ***կունենա*** գերմաներենի ԼԻԵՇ-ի B2 մակարդակի հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիքներ, ուսումնասիրվող լեզվի ժողովրդի մշակույթին բնորոշ հաղորդակցման ոչ լեզվական միջոցներ, ***կտիրապետի*** գերմաներենով տարբեր բնագավառների շուրջ հաղորդակցվելու հմտություններին, ***կիմանա*** թարգմանության կատարելու, համարժեքությունը պահպանելու սկզբունքները, ***կտիրապետի*** բնօրինակ և թարգմանված տեքստերի համեմատական վերլուծություններ կատարելու հմտություններին:
Ա5 ***կիմանա*** կրթության դերը միջմշակութային հաղորդակցության ձևավորման գործում, Եվրոպայի լեզվաքաղաքականության, ԼԻԻԻՀ-ի / CEFR հիմնական սկզբունքները, մակարդակները, կհասկանա՝ ինչ է բազմալեզվությունը, կիմանա աշխարհի լեզուների բազմազանությանը, լեզուների ուսուցման հաղորդակցական մոտեցումը,

կծանոթանա համեմատական-զուգադրական տիպաբանության հիմնարար սկզբունքներին, ճյուղերին և մեթոդներին, մանկավարժական հաղորդակցման ռազմավարությանը, ***կտիրապետի*** միջմշակութային հաղորդակցության առանձնահատկություններին, եվրոպական լեզվական թղթապանակին՝ որպես գնահատման այլընտրանքային գործիքի, վերջինիս հայկական տարբերակին, համեմատական տիպաբանության հիմնարար սկզբունքներին և տեսություններին, հաղորդակցական տեխնոլոգիաներին:
Ա 6. ***կիմանա*** անգլոամերիկյան գրականության պատմամշակութային ժամանակաշրջանները և կարևորագույն ստեղծագործությունները, կհասկանա Լուսավորչության, ռոմանտիզմի, Վիկտորիական գրականության, մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի ժամանակաշրջանների առանձնահատկությունները՝ գրականության համատեքստում, կներկայացնի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման կարևորությունը դասավանդման գործընթացում, ***կտիրապետի*** անգլոամերիկյան գրականության պատմամշակութային ժամանակաշրջանները և կարևորագույն ստեղծագործությունները ներկայացնելու, նրանց առանձնահատկությունները նշելու, ժամանակակից տեխնոլոգիաները դասավանդման գործընթացում կիրառելու հմտությունների:
Ա 7 ***կիմանա՝*** արդի կրթական համակարգերի կազմակերպման մեթոդաբանությունը, իրավական հենքը, մարտահրավերները, տեխնոլոգիաները, ուսուցման որակի առանցքային դրույթները, կրթության սուբյեկտների կրթական պահանջմունքները և զարգացումը, կրթական միջավայրի հետ փոխներգործության բնույթը, ինքնազարգացման պայմանները, արժևորել մագիստրոսական թեզի վերաբերյալ առկա տեսությունները, հայեցակարգերը, մոտեցումները, սկզբունքները, մեկնաբանել և համադրել մասնագիտական ոլորտի արդի տեսություններն ու մեթոդները, հիմնավորել կատարած հետազոտության արդյունքները: ***կտիրապետի՝*** գիտական հետազոտություններն ինքնուրույն պլանավորելու և իրականացնելու կարողությունների, գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանության հիմնական դրույթների և դրանք մագիստրոսական թեզի պատրաստման աշխատանքներում կիրառելու կարողությունների,
Բ Բուն մասնագիտական կարողություններ
Բ1 ***կարող է կիրառել*** տեղեկատվական և արհեստական բանականության տեխնոլոգիաները հետազոտական գործընթացների կազմակերպման և տվյալների մշակման մեջ, իրականացնել խորքային հետազոտություններ՝ կիրառելով ԱԲ և այլ գործիքներ:
Բ2. կարող է ինքնուրույն պլանավորել և իրականացնել գիտական հետազոտություն իր մասնագիտական ոլորտում, վերլուծել առկա գիտական տեղեկատվությունը և տեսակետները, հիմնավորել սեփական հետազոտական մոտեցումների արդյունավետությունը և կայացնել գիտականորեն փաստարկված որոշումներ, կիրառել ընդհանուր գիտական տրամաբանական մեթոդներ, մշակել, համակարգել, մեկնաբանել մանկավարժական հետազոտության արդյունքները, կողմնորոշվել ազգային կրթության օրենսդրական դաշտում՝ նպաստելով դպրոցի բարեփոխումների գործընթացին, ներկայացնել հստակ և տրամաբանական կառուցվածքների միջոցով գրավոր և բանավոր արդյունավետ փաստարկներ,
Բ 4. կարող է կառուցել ակադեմիական տեսանկյունից ճիշտ ձևակերպված խոսք, կատարել C 2 բարդության քերականական վարժություններ, կիրառել ձեռք բերված բառապաշարը տարբեր

թեմաների քննարկման և էսսեների պատրաստման ժամանակ, լրացնել Cambridge English, Proficiency (CEP) միջազգային քննության թեստեր, օգտագործել հստակ, կառուցվածքային և դիվանագիտական լեզվական միջոցներ բիզնես նամակագրության և բանավոր հաղորդակցման մեջ , մեկնաբանել թարգմանության դերը և առանձնահատկությունները օտար լեզվի դասավանդման գործընթացում;
Բ 5. կարող է կիրառել տարբեր ռազմավարություններ միջմշակութային հաղորդակցության գործընթացում, տարբերակել եվրոպական լեզվաքաղաքականության հիմնական սկզբունքները, կիրառել ԼԻԻՀՀ փաստաթուղթը մասնագիտական գործունեության մեջ, լեզվական թղթապանակը՝ որպես գնահատման այլընտրանքային գործիք լեզուների ուսուցման և դասավանդման գործընթացում, մշակել հաղորդակցական ռազմավարություններ, վերլուծել և տարբերակել համեմատական տիպաբանության հիմնարար սկզբունքներն ու տեսությունները,
Բ 6. կարող է կիրառել ձեռք բերված գիտելիքները մասնագիտական գործունեության ժամանակ, մեկնաբանել գրականության գեղագիտական արժեքը, դաստիարակչական ու ճանաչողական արժեքները, վերլուծել գրական ստեղծագործությունները միջմշակութային առնչությունների ներքո,
Բ7. կարող է լուծել հետազոտությունների ընթացքում ծագած խնդիրները, մշակել հետազոտությունների արդյունքները, շարադրել հետազոտության թեմային վերաբերող նյութերը հաշվետվությունների, տպագրությունների, զեկուցումների ձևով, ներկայացնել իրականացրած հետազոտությունը և պաշտպանել առաջադրած դրույթները, կիրառել փաստերի հավաքագրման, պահպանման և մշակման մեթոդները, հավաքել, մշակել, վերլուծել, գնահատել և մեկնաբանել մասնագիտական ոլորտի հիմնախնդիրներին վերաբերող քանակական և որակական տվյալներ՝ եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու համար, դրսևորել ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար և ծավալելու ինքնուրույն մասնագիտական-հետազոտական գործունեություն ակադեմիական ոլորտներում:
Գ. Ընդհանրական կարողություններ
Գ1. կարող է լուծել մասնագիտական և միջմասնագիտական խնդիրներ, գիտահետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար դրսևորել վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցումներ
Գ 2. կարող է մասնագիտական ոլորտում նոր և բարդ խնդիրների լուծման ու գիտահետազոտական աշխատանքներին օժանդակելու համար կիրառել առաջադեմ ՏՀՏ-ները
Գ 3. կարող է հստակ ու համակարգված կերպով ներկայացնել սեփական հիմնավորումները, եզրահանգումները, հետազոտության արդյունքները,
Գ 4. կարող է ստեղծել և ղեկավարել գիտական կամ գիտահետազոտական թիմ, ձևավորել համագործակցային միջավայր, կրթական և գիտահետազոտական գործունեության արդյունքները օգտագործելու ու ներկայացնելու տարբեր բնագավառներում
Գ 5. սեփական կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները ինքնուրույն բացահայտել ՝ շարունակական ուսուցման համատեքստում՝ :
Գ 6. կարող է աշխատանքային ցանկացած իրադրության մեջ կայացնել կառավարման ռազմավարական որոշումներ:

12. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

✓ դասախոսություն-զրույց , դասախոսություն-քննարկում
✓ դաս-կոնֆերանս
✓ ինտեգրատիվ դաս
✓ հիմնահարցային դասախոսություն
✓ *հիմնահարցային սեմինար*
✓ *թեմատիկ սեմինար*
✓ արտադրական գործնական պարապմունքներ
✓ դիսպուտ / գիտական վեճ բանավեճ
✓ դիրքորոշային / դրույթային դասախոսություն
✓ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ դասախոսություն
✓ դասախոսություն-խորհրդատվություն
✓ զուգակցված դաս
✓ սեմինար
✓ սեմինար-բանավեճ
✓ դիսպուտ / գիտական վեճ բանավեճ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

✓ սոցիալ-մասնագիտական իրադրությունների վերլուծություն
✓ գիտելիքները գործնականորեն կիրառելու ինքնուրույն աշխատանքներ
✓ գիտելիքների և կարողությունների վերարտադրողականությանը ուղղված ինքնուրույն աշխատանքներ
✓ քեյզ մեթոդ
✓ կուրսային և ավարտական աշխատանքների նախապատրաստում և պաշտպանություն
✓ խմբային քննարկումներ
✓ նախագծային մեթոդ
✓ դերային խաղեր
✓ խմբային ինքնուրույն աշխատանք
✓ բառ-բանալի
✓ հեղինակի աթոռ
✓ խմբային հետազոտություն
✓ վեբ-որոնում

13. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մասնագիտական գիտելիքների և իմացության գնահատման մեթոդները

Ուսանողների գիտելիքները և իմացությունը գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- թեստային աշխատանք,
- վերջնական բանավոր քննություններ,
- կոնկրետ իրավիճակայի նխնդրի լուծում
- խորանարդում

Գործնական մասնագիտական կարողությունների գնահատման մեթոդները

Ուսանողների գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- վերջնական բանավոր քննություններ,
- առաջադրանքների կատարման ստուգում,
- ախտորոշիչ մեթոդների ու մեթոդիկաների կիրառման արդյունքների ներկայացում,
- գործնական աշխատանք,
- դերային խաղ,

- գաղափարների և հասկացությունների քարտեզագրում

Ընդհանրական (փոխանցելի) կարողությունների գնահատման մեթոդները.
Ուսանողների ընդհանրական /փոխանցելի/ կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- Բանավոր հարցում,
- գրավոր հարցում,
- թեստային գնահատում,
- սեմինարներին մասնակցության գնահատում,
- էսսեների պատրաստում և զեկուցում,
- առաջադրանքների կատարման ստուգում,
- ռեֆերատների պատրաստում և զեկուցում,
- ինքնուրույն աշխատանքի հրապարակային պաշտպանություն,
- անհատական առաջադրանքների կատարման ստուգում,

14. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատությունը պետք է ունենա համապատասխան նյութատեխնիկական բազա՝ սովորողների առարկայական և միջառարկայական պատրաստությունը, լաբորատոր, գործնական և հետազոտական աշխատանքներն ապահովելու համար:
Մագիստրոսական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ցանկն ընդգրկում է՝

- *տեսալսողական կաբինետ,*
- *ուսումնական լսարաններ՝ կահավորված մուլտիմեդիական ցուցադրական համալիրներով,*
- *լինգաֆոնային կաբինետ*
- *համակարգչային լսարան՝ գլոբալ որոնողական համակարգերից օգտվելու հնարավորությամբ,*
- *էլեկտրոնային հրատարակումներ օգտագործելու դեպքում՝ այդ բազայից օգտվելու հնարավորություն:*

Ուսումնական գործընթացի տեղեկատվական և ուսումնամեթոդական ապահովմանը ներկայացվող պահանջներ

- *ՄԿԾ-ով նախատեսված բոլոր ուսումնական դասընթացները, դրանց մոդուլները պետք է ապահովվեն ուսումնամեթոդական փաստաթղթերով և նյութերով:*
- *Սովորողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի իրականացումը պետք է զուգորդվի մեթոդական ապահովմամբ և ծախսված ժամանակի հիմնավորմամբ:*
- *ՄԿԾ-ի իրականացումը յուրաքանչյուր սովորողի թույլատրում է մուտք գործել տվյալների բազա, գրադարանային ֆոնդեր, ստանալ տեղեկատվություն և խորհրդատվություն:*
- *Գրադարանային ֆոնդը պետք է համալրված լինի ոչ միայն մասնագիտական, այլ նաև հումանիտար, սոցիալական և տնտեսական դասընթացներին համապատասխան տպագիր և/ կամ էլեկտրոնային հրատարակություններով:*

15. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

‹‹Անգլերեն լեզու և գրականություն›› մասնագիտական կրթական ծրագիրը պետք է իրականացնեն գիտամանկավաժական այն կադրերը, որոնք ունեն համապատասխան

մասնագիտական բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում) և զբաղվում են գիտական կամ գիտամանկավարժական, գիտամեթոդական գործունեությամբ:

Մասնագիտական դասընթացները դասավանդողների առնվազն 50%-ը պետք է ունենան գիտական աստիճան և /կամ/ կոչում: Կրթական գործընթացում կարող են ներգրավվել նաև դասախոսներ՝ պրակտիկաների բազային մարմինների, մասնագիտական կազմակերպությունների, գիտահետազոտական հաստատությունների համակազմից:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտական կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմը պետք է ունենա անձնային, մանկավարժական, կազմակերպչական, հաղորդակցական որոշակի որակներ և հմտություններ, դրսևորի համակարգչային ծրագրերի իմացություն:

Ա. Անձնային որակներ

Մասնագետը պետք է ունենա ինքնադրսևորվելու, ուսումնական գործընթացում հնարավոր խնդրահարույց իրավիճակները հարթելու, ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և վարվեցողության նորմեր ձևավորելու, ուսումնառողների ներուժը օբյեկտիվ գնահատելու կարողություններ:

Բ. Մանկավարժական որակներ

Մասնագետը պետք է ունենա

մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կարողանա դրանք կիրառել, իմանա բարձրագույն կրթության ոլորտին վերաբերող ՀՀ գործող օրենսդրական փաստաթղթերը և կարողանա դրանք ներկայացնել, մեկնաբանել, վերլուծել, զարգացնել ուսանողների ստեղծագործական, վերլուծական, քննադատական մտածողության ունակությունները, համադրել մանկավարժական տարբեր մեթոդներն ու հնարները, կազմակերպել անհատական և խմբային աշխատանքները, ձևակերպել դասավանդման նպատակներն ու խնդիրները, կազմել և մշակել դասընթացի ծրագիրը:

Գ. Կազմակերպչական որակներ

Մասնագետը պետք է դրսևորի

Ուսուցման գործընթացում ճիշտ ձևերի ու մեթոդների ընտրության, սուբյեկտների միջև փոխգործակցային և համագործակցային հարաբերությունների ձևավորման կարողություն,

Վերահսկողության, գնահատման գործընթացների մոդելավորման կարողություն,

Բարենպաստ ուսումնական միջավայր ձևավորելու և ծրագրերը արդյունավետորեն իրականացնելու կարողություն,

Ժամանակի ճիշտ և արդյունավետ օգտագործման կարողություն:

Դ. Հաղորդակցական հմտություններ

- Օտար լեզուներով գրավոր և բանավոր անսխալ հաղորդակցվելու հմտություն,
- Մանկավարժահոգեբանական հաղորդակցման բարձր մշակույթի դրսևորում:

Ե. Համակարգչային ծրագրերի իմացություն

Մասնագետը պետք է տիրապետի

Տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու, հիմնական համակարգչային ծրագրերով MS Office (Access, Excel, Power Point, Word) աշխատելու,

PPT սահիկաշարեր պատրաստելու, կորպուսային լեզվաբանության տվյալների հետ աշխատելու, MLA ոճով գիտական հետազոտություններ իրականացնելու հմտություններին:

Զ. Դասախոսի մասնագիտական որակները

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտական կրթական ծրագիրն սպասարկող դասախոսը պետք է

իմանա

- ✓ դասավանդած լեզվաբանական կամ գրականագիտական առարկայի կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները, հիմնական հասկացությունները, զարգացման ընթացքն ու օրինաչափությունները,
- ✓ մասնագիտական լեզուներով խոսող հանրույթների պատմամշակութային զարգացման ընթացքը և լեզվամշակութային առանձնահատկությունները,
- ✓ անգլերեն լեզվի, գրականության ուսումնասիրման հայեցակետերն ու մեթոդները, ուսուցման հետ կապված խնդիրները, մեթոդները:

կարողանա

- ✓ ցուցաբերել իր մասնագիտության բնագավառում տեսական խորը գիտելիքներ, ներկայացնել անգլերեն լեզվի և գրականության զարգացման փուլերն ու օրինաչափությունները,
- ✓ բացատրել նյութի ներքին պատճառաբանվածությունը, կատարել համեմատական և կերպարային վերլուծություններ,
- ✓ տարբեր հայեցակետերից մեկնաբանել լեզվական և գրականագիտական իրողությունները,
- ✓ կիրառել ուսուցման արդյունավետ և առաջավոր մեթոդներ,
- ✓ ցուցաբերել գործնական մոտեցում լեզվական և գրական նյութերի նկատմամբ:

Տիրապետի

- ✓ մասնագիտական գիտելիքները գործնականում ներկայացնելու, վերլուծելու և կիրառելու,
- ✓ գիտելիքների հաղորդման, ուսուցման նպատակով համակարգչային ծրագրերից օգտվելու,
- ✓ հետազոտության, ուսուցման և գնահատման մեթոդները կրառելու հմտությունների:

16. ՍՈՎՈՐՈՂԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ մագիստրոսը պատրաստ է կրթությունը շարունակելու ասպիրանտուրայում՝ ստանալով հետազոտողի որակավորում (գիտությունների թեկնածուի գիտական աստիճան):

17. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ կրթական ծրագրի շրջանավարտը կարող է աշխատել՝

1. հանրակրթական դպրոցներում՝ որպես անգլերեն լեզվի և գրականության ուսուցիչ
2. վարժարաններում, քոլեջներում, բուհերում՝ որպես անգլերեն լեզվի և գրականության, դրանց դասավանդման մեթոդիկաների ուսուցիչ, դասախոս
3. զանգվածային լրատվամիջոցներում որպես թարգմանիչ,
4. զբաղվել գիտությամբ՝ ուսումը շարունակելով կրթության երրորդ աստիճանում՝ ասպիրանտուրայում:

18. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Գավառի պետական համալսարանում իրականացվող «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտական մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրի կայունությունը պայմանավորող գործոններն են մանկավարժական մասնագիտության նկատմամբ հասարակության հարգալից վերաբերմունքը, դիմորդների շրջանում մանկավարժության նկատմամբ եղած հետաքրքրությունը, ՀՀ Գեղարքունիքի մարզում դպրոցների, քոլեջների, այլ ուսումնական հաստատությունների առկայությունը, հանրապետության և մարզի ուսումնական հաստատություններում աշխատելու հնարավորությունը, ԳՊՀ շրջանավարտների՝ դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում աշխատելու դրական փորձը, ուսման համեմատաբար ցածր վարձավճարը, «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի կադրային և մեթոդական պատշաճ ապահովվածությունը, պրակտիկ մանակավարժների, Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության հետ ա համագործակցությունը,հետ ամբիոնի համագործակցությունը, ուսանողների համար անհրաժեշտ պրակտիկայի բազայի առկայությունը՝ ի դեմս մարզի դպրոցների, քոլեջների, այլ ուսումնական հաստատությունների, շրջանավարտներին համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելվածի տրամադրումը, ԳՊՀ-ում էլեկտրոնային ուսուցման՝ «E-Learning.GSU» համակարգի, էլեկտրոնային գրադարանի՝ «E-Library.GSU» առկայությունը, հանրակրթության բարեփոխումներին զուգընթաց մասնագիտական կրթական ծրագրի վերանայման և բարելավման շարունակական աշխատանքները, մանկավարժին ներկայացվող արդի պահանջներին մասնագիտական կրթական ծրագրի վերջնական արդյունքների համապատասխանեցման աշխատանքները։

Կրթական ծրագիրն ունի նաև որոշակի ռիսկեր։ Բացասական գործոններ են անվճար (պետպատվեր) տեղերի փոքր թիվը, ուսանողների մեծ մասի ընտանիքների սոցիալապես անապահով վիճակը, ուսման վարձը վճարելու դժվարությունները, ՀՀ Գեղարքունիքի մարզում տարեցտարի նկատվող ժողովրդագրական բացասական միտումները, դիմորդների թվի զգալի նվազումը, 1 տարի սովորելուց հետո այլ բաժիններ տեղափոխությունը, հեռավար ուսուցման հնարավորության բացակայությունը, Մանկավարժություն մասնագիտության գծով ԳՊՀ-ում ասպիրանտուրայի բացակայությունը, մասնագիտությամբ աշխատանք գտնելու դժվարությունները, փորձառու ուսուցիչների կողմից երիտասարդ մասնագետների նկատմամբ անվստահությունը։

ՄԱՍ Ի. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման, արժևորման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգը (ECTS) միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը մեկ ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

ECTS համակարգի կարևոր հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ ենթակա բոլոր բաղկացուցիչներին. դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, մագիստրոսական թեզի պատրաստմանը, պաշտպանությանը և այլ աշխատանքներին,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են վաղօրոք (տպագրվում և/կամ տեղադրվում են ԳՊՀ կայքէջում):

ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

ECTS կրեդիտի կարևոր հատկանիշներն են.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, ինքնուրույն հետազոտական աշխատանքը, մագիստրոսական թեզի պատրաստումն ու պաշտպանությունը և այլն,
- կրեդիտը չափում է ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և մագիստրոսի կրթական ծրագրի աշխատածավալը

2.1. ԳՊՀ-ում մագիստրոսի կրթական աստիճանում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը կազմում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:

2.2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

2.3. Ուսումնական տարվա տևողությունը 20 շաբաթ է, որից 14-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Ըստ այդմ՝ կիսամյակի ուսումնական պարապմունքների տևողությունը սահմանվում է 14 շաբաթ:

2.4. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ ծանրաբեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1.5 ակադեմիական կրեդիտի:

2.5. Մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

2.6. Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 120 կրեդիտ է:

3. Դասընթացները և կրթական մոդուլները

3.1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով:

3. 2. Մեծածավալ դասընթացները բաժանված են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

3. 3. Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց յուրացման բնույթով բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ՝ ամրագրված որոշակի կիսամյակներում,

բ) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

4. Ուսումնական ծրագիրը

Մագիստրոսի ուսումնական ծրագիրը ներառում է երկու հիմնական կրթամաս՝ ուսումնական և հետազոտական, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ:

Ծրագրի ընդհանուր կառուցվածքը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 1

Կրթամասերի բաշխումն ըստ կրեդիտների

	1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ	3-րդ կիսամյակ	4-րդ կիսամյակ	Ընդամենը
Ուսումնական	26	25	13	8	72
Հետազոտական	3	6	15	24	48

Կրթամասերի բաշխումն՝ ըստ կրեդիտների

Աղյուսակ 2

Կրթամաս	**Կրեդիտներ**
Ուսումնական	**72**

Ընդհանուր մասնագիտական դասընթացներ	**6**
Մասնագիտացված պատրաստման դասընթացներ	**66**
Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ	**54**
Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ	**12**
Հետազոտական կառուցամաս	**48**
Գիտահետազոտական աշխատանք	**24**
Գիտահետազոտական պրակտիկա	**6**
Գիտամանկավարժական պրակտիկա	**6**
Եզրափակիչ ատեստավորում	**12**

4. 2. Ըստ մասնագիտությունների՝ կրթամասերին հատկացվող կրեդիտների քանակը կարող է ունենալ մինչև 20% շեղում: Ուսումնական կիսամյակի համար սահմանված է 20 շաբաթյա տևողությունը, որից 14-ը հատկացվում է տեսական ուսուցմանը, իսկ 6-ը՝ քննաշրջանի համար:

5. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

5.1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների /կուրսղեկների/ ծառայություն, որում ընդգրկվում են մասնագիտության ուսումնական ծրագրերի քաջատեղյակ մասնագետներ:

5.2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:

5.3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, կրթական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբակային և անհատական խորհրդատվություններ:

5.4. Անհրաժեշտության դեպքում, ելնելով ուսանողների պահանջներից, կազմակերպվում է լրացուցիչ խորհրդատվություն՝ ընդգրկելով տվյալ կամ հարակից մասնագիտությամբ և անհրաժեշտ որակներով խորհրդատուի (խորհրդատուների):

6. Ուսանողի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը Մագիստրոսների գիտելիքների գնահատման համար կիրառվում է համալսարանում գործող 100 միավորանոց սանդղակը՝ համապատասխան ECTS համակարգում գործածվող տառային նիշերի: Դասընթացի գնահատման համար գործածվում է գնահատականի աստիճանական կուտակման սկզբունքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Աղյուսակ 3

Գնահատականը	Նշանակումը	Թվանշանը	Միավորը
Գերազանց	A + A A -	4,0 4,0 3,7	95-100 87-94 81-86
Լավ	B+ B B-	3,3 3,0 2,7	75-80 67-74 61-66

Բավարար	C+ C C-	2,3 2,0 1,7	55-60 46-54 40-45
Անբավարար	D	1,0	0
Չներկայացած	F	-	0
Ստուգված	S	-	≥40
Չստուգված	U	-	< 40

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում հանրագումարային միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ A (4,0)):

6.1. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 40-ից ցածր միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:

6.2. Միավորների բաշխումն ըստ գործոնների.

Տեսական դասընթացների համար

Աղյուսակ 4.

Գնահատվող աշխատաձևերը	Ընդհանուր գնահատականի կառուցվածքը
ա) Մասնակցությունը դասընթացին	10 միավոր
բ) Գիտելիքների ընթացիկ բանավոր կամ գրավոր ստուգում	50 միավոր
գ) Գիտելիքների ամփոփիչ ստուգում	40 միավոր
Ընդհանուր գնահատականը	100 միավոր

Գործնական դասընթացների համար

Աղյուսակ 5.

Դասընթացի աշխատաձևերը	**Գնահատման կառուցվածքը**
ա) Մասնակցությունը դասընթացին	10 միավոր
բ) Ընթացիկ ստուգումներ	40 միավոր
գ) Գիտելիքների ամփոփիչ ստուգում (ավարտական քննություն)	50 միավոր
Ընդհանուր գնահատականը	100 միավոր

Ծանոթություն. Գիտական սեմինարները, պրակտիկաները, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքները ենթակա են գնահատման ստուգված/չստուգված ձևաչափով, որը չի ենթադրում գործոնային հաշվարկ: Ստուգումը կատարվում է մագիստրոսի գիտական ղեկավարի կամ ամբիոնի վարիչի կողմից:

6.3.Քննությունը համարվում է հանձնված, եթե դասընթացի գնահատման ամբողջական արդյունքը գերազանցում է 40 միավորը կամ գնահատման սանդղակի 40%-ը: Եթե դասընթացի գնահատման ամբողջական արդյունքը պակաս է 40 միավորից, ապա

թույլատրվում է դասընթացի վերահանձնում: Դրական գնահատված դասընթացի վերահանձնում չի թույլատրվում: Մագիստրոսը հեռացվում է համալսարանից՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի:

Մագիստրոսական թեզի գնահատման գործոններ

Աղյուսակ 6

h/h	Չափանիշներ	Միավորը
1	Արդյունարար գնահատականը	0-100
2	Տառային նշանակումը և թվային նշանակումը	C- - A+/1,7 – 4,0

Աղյուսակ 7

h/h	**Գործոններ**	**Միավոր**
1	Թեզի թեմայի արդիականությունը, նորույթը	10
2	Թեզի ընդհանուր բնութագիրը (հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ), բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները և արված եզրակացությունները և առաջարկությունները	50
3	Մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջների պահպանումը (շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները, հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը)	10
4	Թեզի ներկայացումը, պաշտպանությունը	30

Ուսանողների գիտելիքների որակի ստուգման ձևերը

Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում, օգտագործելով ակադեմիական կրեդիտների կուտակման համակարգը, կիրառվում են ուսանողների գիտելիքների որակի ստուգման հետևյալ տեսակներն ու ձևերը.

7. Ընթացիկ ստուգում

7.1. Ընթացիկ ստուգման ձևեր կարող են հանդիսանալ հարցումները, կարճատև ելույթները գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ, լսարանային ստուգողական աշխատանքները, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքները, հոդվածը, զեկուցումը, թեստերի լուծումը և այլն:

7.2. Ընթացիկ ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածությունը գործնական և սեմինար պարապմունքներին, գնահատում է նյութի յուրացման մակարդակը, լսարանային աշխատանքներին նրա մասնակցությունը և ի հայտ է բերում ուսանողների պատրաստվածության թերությունները՝ տվյալ դասընթացի մեթոդները կատարելագործելու, պարապմունքների ընթացքում ուսանողների աշխատանքը ակտիվացնելու և իր կողմից ուսանողին անհատական օգնություն ցուցաբերելու նպատակով:

7.3. Ողջ ուսումնառության ընթացքում ուսանողների գիտելիքների ստուգման համար ընթացիկ ստուգումները իրականացվում են այն դասախոսների կողմից, ովքեր անցկացնում են գործնական կամ սեմինար պարապմունքները:

7.4. Անկախ ընթացիկ ստուգման տեսակից՝ դասախոսը պարտավոր է անցկացնել տվյալ խմբի բոլոր ուսանողների ընթացիկ ստուգում և գնահատում:

7.5. Ընթացիկ ստուգման արդյունք են համարվում այն միավորներով արտահայտված գնահատականները, որոնք ուսանողը հավաքում է ընթացիկ ստուգման համար տրված բոլոր աշխատանքներից և հաշվարկված ընթացիկ ստուգման գնահատականի մեջ նրա համամասնությունից:

7.6. Ընթացիկ ստուգման ձևերը որոշվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացից ուսումնական պլանով նախատեսված պարապմունքի ձևերը:
7.7. Եթե ուսումնական պլանի համաձայն որևէ դասընթացից գործնական կամ սեմինար պարապմունք նախատեսված չէ, ապա ընթացիկ ստուգումն անցկացվում է դասախոսի կողմից տվյալ դասընթացի առարկայական ծրագրով նախատեսված պարտադիր գրավոր աշխատանքների (ստուգողական աշխատանք, թեստեր և այլն) կամ բանավոր հարցման միջոցով:
7.8. Ընթացիկ ստուգումների ձևերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռը ընդհանուր գնահատականի մեջ, և այդ տեսակարար կշիռների գումարը պետք է հավասար լինի 1-ի:

Օրինակ 1.

Հ/հ	**Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ձևերը**	**Ընթացիկ և ինքնուրույն հետազոտա կան աշխատանքի ստուգման գնահատա կանի մեջ յուրաքանչ յուրի տեսակարար կշիռը**	**Ընթացիկ և ինքնուրույն հետազոտա կան աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /30 միավորի շրջանակնե րում/**	**Ընթացիկ և ինքնուրույն հետազոտա կան աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատական ը /5այունակի միավորը. = 3այ.*4այ. /**
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	27	10,8
3.	Սեմինար պարապմունք	0,4	28	11,2
4.	Թեստ			
5.	Հարցում	0,2	16	3,2
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				**25,2=26**

1) քննությամբ ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 2.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակները	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին

		մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	ձևին տրվող միավորը /15 միավորի շրջանակներում/	տրվող գնահատականը /5սյունակի միավորը. = 3սյ.*4սյ. /
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	11	4,4
3.	Սեմինար պարապմունք			
4.	Թեստ	0,6	14	8,4
5.	Հարցում			
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				**12,8=13**

Այսպիսով, ՎԳընթ=Կx*Գx., որտեղ
ՎԳընթ-ն ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականն է,
Կx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի տեսակարար կշիռը,
Գx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի գնահատականը:
Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի օգտագործված ձևերի տեսակարար կշիռը հավասար է 1-ի /0,4+0,4+0,2=1/, /0,4+0,6=1/:
Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականը կարող է կլորացվել ի օգուտ ուսանողի, մինչև մոտակա ամբողջ թիվը:
Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի համար դասախոսը կարող է հատկացվող միավորների շրջանակներում կիրառել նաև այլ մոտեցում՝ նախապես այն սահմանելով դասընթացի առարկայական ծրագրում և տեղյակ պահել ուսանողներին:

8 Հանրագումարային ստուգում

8.1. Հանրագումարային ստուգման ձևերն են քննությունները և հանրագումարային ստուգարքները (այն մոդուլներից, որոնցից քննություն չի անցկացվում):
8.2. Հանրագումարային ստուգումը նպատակ ունի բացահայտել և գնահատել ուսանողների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները տվյալ դասընթացից:
8.3. Հանրագումարային ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում վերջնական քննությանը հատկացված 40 միավորի շրջանակում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:
8.4. Հանրագումարային ստուգումների ժամանակացույցը գնահատման գործոնների և սկզբունքների հետ միասին հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից և տեղեկացվում դասախոսներին ու ուսանողներին՝ անցկացման ժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:
8.5. Տվյալ դասընթացից հանրագումարային ստուգմանը մասնակցելու և գնահատվելու իրավունք ունեն միայն այն ուսանողները, ում հաճախելիության տոկոսը բարձր է առարկայական ծրագրում նշված նվազագույն ցուցանիշից, ինչը 40%-ից ցածր չպետք է լինի:
8.6. Հաճախելիությունը գնահատվում է հետևյալ կերպ.

հաճախելիության ցուցանիշը հավասար է մի մեծության, որը ստացվում է ուսանողի կողմից տվյալ դասընթացին ներկա գտնված ժամաքանակը բազմապատկած 10-ով և արդյունքը բաժանած դասընթացի ընդհանուր ժամաքանակի վրա:
Դասընթացի ընդհանուր ժամաքանակ
8.7. Հանրագումարային ստուգման գնահատման ժամանակ այդ գնահատման բաղադրիչ տարրերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռները, որոնք պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները:
8.8. Ուսանողի վերջնական գնահատականը հաշվարկվում է վերոհիշյալ բոլոր գործոններից վաստակած միավորների գումարումով: Ստացված գումարային միավորը՝ ըստ գնահատման վերաբերյալ համակարգի, համապատասխանեցվում է տառային նշանակումներին: Ըստ այդմ՝ համապատասխան A-, A, A+, B-, B, B+, C-, C, C+, S գնահատականները դրվում են տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ, իսկ D, F, U գնահատականները՝ միայն տեղեկագրի մեջ:
8.9. Այն ուսանողները, ովքեր ստանում են «անբավարար», «չստուգված» կամ «չներկայացած», համարվում են ակադեմիական պարտք ունեցողներ:

9. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

9.1 Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԳՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:
9.2 Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:
9.3 Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- ծրագրային կրեդիտների քանակը,
- որակավորման կրեդիտների քանակը,
- վարկանիշային միավորները,
- միջին որակական գնահատականը:

9.4 Ծրագրային կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:
9.5 Որակավորման կրեդիտը (ՈԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով.

ՈԿ = Կրեդիտ

9.6 Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

ՎՄ = Կրեդիտ Գարդ.

որտեղ Գարդ.-ը ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է (օրինակ, եթե 2 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 3,0, ապա տվյալ դասընթացի վարկանիշային միավորը հավասար է 2 կրեդիտ 3,0 = 6՝ 8 հնարավորից):

9.7 Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները որակավորման կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ՈԿ}}$$

9.8 Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

10. Լուծարքի, առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

Լուծարք

10.1 Լուծարք կազմակերպվում է ամփոփիչ քննության կամ ստուգարքի համար:

10.2 Լուծարք է կազմակերպվում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը համապատասխանում է «D»-ի քննության պարագայում /կամ «U»-ի ստուգարքի պարագայում/ և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը ավել է կամ հավասար 25–ից և պակաս՝ 40–ից:

10.3 Ամփոփիչ ստուգումից հետո դեկանատը կազմում է լուծարքին թույլատրված ուսանողների ցուցակը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

10.4 Լուծարքին թույլատրված ուսանողը քննությունը կամ ստուգարքը կարող է հանձնել մեկ անգամ՝ դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան:

10.5. Առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

Ուսանողը չի ստանում տվյալ առարկայի կրեդիտը, եթե՝ այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, որի արժեքը պակաս է 25-ից, այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, որի արժեքը ավել կամ հավասար է 25–ի և պակաս 40-ից, թույլատրվել է ամփոփիչ քննության կամ ստուգարքի լուծարքին, և լուծարքի արդյունքում գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը չի բարձրացել 40-ից:

10.6 Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե նա չի հավաքել 30 կրեդիտ, այսինքն՝ մեկ և ավելի առարկայից կրեդիտ չի ստացել:

11. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

11.1 Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

11.2 Գնահատման տեսանկյունից չեն առանձնացվում հարգելի և ոչ հարգելի պատճառներով բացակայության դեպքերը:

11.3 Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված՝ սահմանված կարգի բժշկական տեղեկանքի և դիմումի առկայության դեպքում:

11.4 Հարգելի պատճառով ընթացիկ ստուգմանը չներկայացած ուսանողն այն կարող է վերահանձնել մինչև հաջորդ ընթացիկ ստուգումն ընկած ժամանակահատվածում՝ նախապես այն համաձայնեցնելով դեկանատի/պարապող դասախոսի հետ:

11.5 Հարգելի պատճառով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ քննաշրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:

11.6 Եզրափակիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման

‹լուծարքի› շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա արդյունարար գնահատականը փոքր է 40-ից, սակայն բարձր է 25-ից:
11.7 Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն ու անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 1,7 միավորը չհավաքած ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու ակադեմիական պարտքերի մարման ‹լուծարքի› շրջանում:
11.8 Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ մնում՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:
11.9 Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակը ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

12. Մագիստրոսական ծրագրի հետազոտական հատվածի կազմակերպման ընթացակարգ

12.1. Հետազոտական մոդուլների ժամանակացույցը

Յուրաքանչյուր կիսամյակի երկրորդ շաբաթվա ընթացքում ծրագրի ղեկավարը կազմում և մագիստրանտներին է ներկայացնում տվյալ կիսամյակի հետազոտական օրացույցը (ծրագրի հետազոտական հատվածով նախատեսվող կրթական մոդուլների կազմակերպման ժամանակացույցը): Այն, ըստ կիսամյակի բովանդակության, ներառում է գիտական սեմինարների և պրակտիկաների կատարման ժամանակացույցերը:

12.2. Ատեստավորման կարգը

Ծրագրի հետազոտական հատվածով նախատեսված կրթական մոդուլների հաշվետվության համար կիրառվում է ստուգված/չստուգված նշումով ատեստավորման եղանակ: Գիտական սեմինարների և պրակտիկաների, ինչպես նաև ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների ատեստավորումը կատարում է ծրագրի ղեկավարը, մագիստրանտի գիտական ղեկավարը կամ համապատասխան որակավորման ունեցող այլ անձ: Ուսումնառության առաջին կիսամյակի ավարտին ծրագրի համապատասխան հետազոտական մոդուլից ատեստավորում չստացած մագիստրանտիներին հնարավորություն է տրվում շարունակելու ուսումը երկրորդ կիսամյակում՝ այդ ընթացքում կատարելով չատեստավորված մոդուլով նախատեսվող աշխատանքը: Երկրորդ և երրորդ կիսամյակներում որևէ մոդուլով չատեստավորված մագիստրանտիները հեռացվում են համալսարանից: Մագիստրանտը հեռացվում է համալսարանից՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի:

13. Ծրագրի ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը

13.1. Ամփոփիչ ատեստավորման ընթացակարգը

Ծրագրի ամփոփիչ ատեստավորման կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.
ա/ թեզի ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի քննարկմանը: Թեզի հետ միասին ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը ներառում է մագիստրանտի աշխատանքի հիմնավորված գնահատական,
բ/. մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից ընդդիմախոսի՝ արտաքին գրախոսողի նշանակում,
գ/. մագիստրոսական թեզի նախնական քննարկում մագիստրոսական ծրագրի ղեկավարի, մագիստրանտի գիտական ղեկավարի, պաշտոնական ընդդիմախոսի կողմից՝ մագիստրանտի մասնակցությամբ:
դ/. Էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում վերամշակել թեզը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Լրացուցիչ քննարկման արդյունքում դրական եզրակացության դեպքում

թեզը մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից երաշխավորում է պաշտպանության: Եզրակացության մեջ նշվում է թեզի հիմնավորված գնահատականը:
ե/. մագիստրոսական թեզի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:

13.2. Մագիստրոսական թեզի գնահատման կարգը

Մագիստրոսական թեզի պաշտպանության գնահատումը կատարվում է 100 միավորանոց սանդղակով /գնահատականը գոյանում է գիտական ղեկավարի, պաշտոնական ընդդիմախոսի և պաշտպանության ընթացքում թեզի ներկայացման և դրա շուրջ արված հարցադրումներին տրված պատասխանների գնահատումների հիման վրա/:

13.3. Ծրագրի ավարտական պահանջները

Որակավորում ստանալու համար մագիստրանտը պետք է ծրագրի կատարման ընթացքում լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն, որից 72 կրեդիտ՝ ուսումնական հատվածից /այդ թվում՝ 60 կրեդիտ պարտադիր դասընթացներից, իսկ 12 կրեդիտ՝ կամընտրական դասընթացներից/ և 48 կրեդիտ՝ հետազոտական հատվածից:

Մինչև ամփոփիչ ատեստավորումը (մագիստրոսական թեզի պաշտպանություն) ընկած ժամանակահատվածը մագիստրանտի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 1,7: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար մագիստրանտը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:

Մագիստրոսներին համապատասխան որակավորմամբ դիպլոմները (սովորական, գերազանցության) տրվում են՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի:

14. Կրեդիտների փոխանցումը

14.1 Այլ բուհերից ԳՊՀ մագիստրանտի կրթական ծրագիր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

14.2 Այլ ուսումնական ծրագրից ԳՊՀ մագիստրանտի ուսումնական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե՝

ա) դրանց բովանդակությունները միանման են,

բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

14.3 Այլ բուհում ԳՊՀ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ԳՊՀ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

14.4 Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար Համալսարանն ունի ECTS-ի բուհական համակարգմամբ զբաղվող կառույց:

15. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

153.1 Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ԳՊՀ-ի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը ԳՊՀ-ում, համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման:

15.2 Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

2025-2026 ուսումնական տարի

Աշնանային կիսամյակ

11 սեպտեմբերի 2024թ. – 15 դեկտեմբերի 2024թ.	
Ուսուցման սկիզբ	10 սեպտեմբեր
Ուսուցման ավարտ	14 դեկտեմբերի
Ստուգարքների հանձնում	24 դեկտեմբերի – 28 դեկտեմբերի
Քննաշրջան	7 հունվարի - 25 հունվարի
Ձմեռային արձակուրդներ	28 հունվարի – 8 փետրվարի

Գարնանային կիսամյակ

Աղյուսակ 7

11 փետրվարի 2025 թ. – 17 մայիսի 2025թ.	
Ուսուցման սկիզբ	11 փետրվարի
Ուսուցման ավարտ	17 մայիսի
Ստուգարքների հանձնում	27 մայիսի-31 մայիսի
Քննաշրջան	03 հունիսի – 21 հունիսի
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	06 մայիսի- 31 մայիսի
Ամառային արձակուրդներ	22 հունիսի – 31 օգոստոսի

ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ

23/Մ7 Գերմաներենը որպես II օտար լեզու (2 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ ,(28 ժամ գործնական)
3-րդ կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակն է՝

1. **նպաստել** անձի հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջմշակութային փոխըմբռմանը, այլ մշակույթների ու արժեքների ընկալմանն ու գնահատմանը, ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքներ ստանալուն, որը միտված է սովորողի հաղորդկակցվելու և համագործակցելու կարողությունների ընդլայնման, նոր լեզվական գիտելիքների ձեռքբերմանը,
2. **զարգացնել** թեմաների շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), ինչպես նաև ուսանողներին հաղորդել դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ և զարգացնել ուսումնական գործընթացը կազմակերպելու հմտություններ:
3. **Ձևավորել** ապագա մանկավարժի մոտ մանկավարժական էթիկայի և պատասխանատվության զգացում, ինչպես նաև տալ գիտելիքներ սովորողների ուսումնառության արդյունքները ճիշտ գնահատելու, հետադարձ կապ տրամադրելու և անհատական մոտեցում ցուցաբերելու վերաբերյալ:

Սովորողներին ներկայացվող պահանջները (գիտելիք, կարողություն և հմտություն) համապատասխանում են ԼԻԵՇ-ի B1-B2 մակարդակին:

Կրթական արդյունքները.
Դասընթացի ավարտին ուսանողը
Կիմանա՝

1. տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիք (բառապաշար, քերականություն, ուղղագարություն, արտասանություն),
2. մենախոսության և երկխոսության տեքստերի կազմակերպման առանձնահատկությունները,
3. ուսումնասիրվող լեզվի ժողովրդի մշակույթին բնորոշ հաղորդակցման ոչ լեզվական միջոցներ,
4. հաղորդակցման, բարեկիրթ խոսքի կաղապարների և վարքի նորմերը,
5. թեմատիկան՝ ըստ շփման, հաղորդակցական հիմնական ոլորտների,

6. լեզվի դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքներ,
7. ուսումնական գործընթացի կազմակերպման սկզբունքները:

Կկարողանա՝

1. Կիրառել յուրացված լեզվական գիտելիքները և ձևավորված հաղորդակցման հմտությունները և կարողունակությունները,
2. լսել և հասկանալ կենդանի հնչող և հեռարձակվող ծանոթ թեմաներով զրույցը, հասարակական, մասնագիտական և գիտական ոլորտներին առընչվող մեդիա հաղորդումների բովանդակությունը, խոսողի տեսակետը և վերաբերմունքը,
3. հանդես գալ տարբեր, այդ թվում՝ մասնագիտական թեմաներով ելույթ-մենախոսություններով, հանպատրաստից պատասխանելով տարբեր/ծրագրին առնչվող/ թեմաներով տրված հարցերի: վերլուծել տարբեր բնույթի տեքստեր՝ իմաստային և կառուցվածքային դիտակետերից,
4. համեմատել և համադրել տարբեր աղբյուրներից քաղված փաստերն ու տեղեկությունները,
5. վերլուծել խոսույթի իմաստաբովանդակային և արտահայտչական բաղադրիչների կազմավորումը, հարաբերակցությունը և դրանց դերը հաղորդակցական խնդիրները լուծելու գործում.
6. պլանավորել և կազմակերպել ուսումնական դասընթացի առանձին հատվածներ, օգտագործել ժամանակակից դասավանդման մեթոդներ և գնահատման գործիքներ՝ ապահովելով սովորողների ներգրավվածությունը:

Կտիրապետի՝

1. ընթերցանության ողջ գործիքակազմին (տեղեկատվության ձեռքբերում և դասդասում, գիտելիքի պաշարում և ընդլայնում, մեկնաբանություն և քննադատական վերլուծություն և այլն):
2. փոխհատուցման կարողությունների, որոնք օտարալեզու տեղեկատվություն ստանալու և հաղորդելու ժամանակ լեզվական գիտելիքների և միջոցների սղության պայմաններում թույլ են տալիս ելք գտնել դրությունից:
3. վերացական, գիտահանրամատչելի, հասարակական և մշակութային թեմաներով հաղորդակցման հմտություններին՝ կարողանալով քննարկել առկա խնդիրները, ներկայացնել տարբեր կարծիքներ և առաջարկել հիմնավորված լուծման տարբերակներ: տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունների վերլուծության, համադրության և գնահատման հմտությանը՝ կարողանալով իր հետաքրքրությունների շրջանակին առնչվող և հանրային նշանակություն ունեցող թեմաներով կազմել համակարգված, գրագետ և փաստարկված տեքստեր:
4. գործաբանական և ուսումնաճանաչողական կարողությունների:
5. ուսումնական նյութը սովորողներին մատչելի ձևով ներկայացնելու և դասի նպատակներին համապատասխան սովորողների առաջադիմությունը գնահատելու հմտություններին:

Բովանդակությունը.

Lektion 1. Reisen, Urlaubsreisen, Wenn einer eine Reise tut....., Mobilität im globalen Dorf, Wandernde Wörter, Arbeit, wo andere Urlanb Machen, **Lektion 2. Einfach schön,** Schön leicht, Schöne Diskussionen, Schön der Reihe nach, Schön wohlfühlen, Schöne Momente, schöne

Worte **Lektion 3. Arbeit,** Welt der Arbeit, Arbeiten, um zu lernen, Leben, um zu arbeiten?, Arbeiten, um zu leben, Erst die Arbeit, dann das Vergnügen, **Lektion 4. Gefühle.** Emotionen, Stark durch Gefühle.

23/Մ2 Գիտահետազոտական աշխատանքի մեթոդաբանություն (2 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
2-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը.
Դասընթացի նպատակն է ուսումնասիրել գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանության հիմնական հասկացություններն ու առանձնահատկությունները, որոնց իմացությունը սովորողներին թույլ կտա լիարժեք ըմբռնել այդ գործընթացը, այսինքն՝ այն, թե ինչպես ձևակերպել ուսումնասիրության օբյեկտը և առարկան, նպատակները, հետազոտության հիմնախնդիրը (պրոբլեմը), ուսումնասիրություններ և գիտափորձեր կատարել, մասնագիտական գրականություն, պատմական, գիտական, նորմատիվ իրավական աղբյուրներ հավաքագրել, ուսումնասիրել և վերլուծել, հիմնախնդրի վերաբերյալ փաստեր հավաքել, վարկածներ առաջադրել ու հիմնավորել, ներկայացնել հիմնավորված եզրակացություններ և նորույթ բովանդակող առաջարկություններ:
Գիտության տարբեր բնագավառներում հետազոտության մեթոդներն ունեն իրենց առանձնահատկությունները: Ուստի սովորողները համադրում են տարբեր գիտակարգերի առաջարկած մեթոդաբանական գիտելիքները, տարբերակում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, ըմբռնում գիտական ճանաչողության գործընթացի յուրահատկությունները:
Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա՝ «Մեթոդաբանություն և մեթոդ», «գիտական հետազոտություն», «հետազոտության առարկա, օբյեկտ, նպատակ, հիմնախնդիր (պրոբլեմ), վարկած, նորույթ» հասկացությունների բովանդակությունը, էությունը,
Կկարողանա՝ վերլուծել մագիստրոսական թեզի կոնկրետ թեմայի բովանդակությունը և նպատակը, ընտրել իր կատարած հետազոտության մեթոդները, հիմնավորել արդիկանությունը, ձևակերպել հետազոտության առարկան ու օբյեկտը, նպատակը, խնդիրները, վարկածը, նորույթը:
Կտիրապետի՝ հետազոտության թեմայի առանձնահատկություններից ելնելով՝ հետազոտության նպատակն ու դրանից բխող խնդիրները հիմնավորելու և հետազոտության համար անհրաժեշտ ու առավել նպատակահարմար մեթոդներ ընտրելու հմտություններին:
Բովանդակությունը.
Թեմա 1. Հետազոտության մեթոդաբանության էությունը: **Թեմա 2**. Հետազոտության սկզբունքներն ու հիմնախնդիրը (պրոբլեմը): **Թեմա 3**. Հետազոտության վարկածի և հայեցակարգի մշակումը: **Թեմա 4**. Մագիստրոսական թեզի հասկացությունը և կառուցվածքը: **Թեմա 5**. Գիտական ճանաչման մեթոդները հետազոտության մեջ:

11/Մ22 Տեղեկատվական տեխնոլոգիաները և արհեստական բանականությունը մասնագիտական հետազոտություններում (2 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (14 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)
1-ին կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տրամադրել համապարփակ գիտելիքներ և գործնական կարողություններ մասնագիտական հետազոտություններում տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) և արհեստական բանականության (ԱԲ) կիրառման վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝

1. Սովորեցնել ՏՏ և ամպային գործիքների կիրառումը տվյալների մշակման, վերլուծության, ավտոմատացման և պրեզենտացիաների ստեղծման համար:
2. Բարձրացնել ուսանողների գեներատիվ ԱԲ (GenAI) և prompt engineering-ի հմտությունները, թույլ տալով արդյունավետ հաղորդակցվել ԱԲ մոդելների հետ՝ նորարարական հետազոտական և գործնական լուծումների մշակման նպատակով:
3. Ապահովել հասկացողություն ԱԲ-ի էթիկայի և պատասխանատու կիրառման վերաբերյալ, ներառյալ տվյալների գաղտնիությունը, սոցիալական ազդեցությունը և իրավական խնդիրները:
4. Խթանել հետազոտական մտածողությունը և ստեղծարարությունը, ինտեգրելով ՏՏ և ԱԲ տեխնոլոգիաները հետազոտական նախագծերում, տվյալների վիզուալիզացիայում և մեդիա բովանդակության արտադրությունում:
5. Նպաստել ուսանողների կարողությանը ներկայացնել և պաշտպանել գիտական արդյունքներ տարբեր ձևաչափերով՝ գիտական զեկույց, վեբ կայք, ինֆոգրաֆիկա կամ պրեզենտացիա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Նկարագրել տեղեկատվական և արհեստական բանականության տեխնոլոգիաների կառուցվածքն ու դերը գիտահետազոտական գործունեության մեջ:
2. Բացատրել գեներատիվ ԱԲ մոդելների հիմնական սկզբունքները, կիրառությունները և սահմանափակումները:
3. Բնութագրել ամպային և տվյալների վերլուծության տեխնոլոգիաների կիրառման մեթոդները հետազոտական գործընթացներում:
4. Ճանաչել ԱԲ հրահանգների մշակման (Prompt Engineering) մեխանիզմները և դրանց կառուցվածքային տարրերը:
5. Վերլուծել ԱԲ-ի ազդեցությունը տնտեսության, կրթության և գիտության վրա՝ հիմնվելով ժամանակակից զեկույցների և ուսումնասիրությունների վրա:
6. Բնութագրել ԱԲ-ի էթիկական հիմնախնդիրները, տվյալների գաղտնիության, վստահության և սոցիալական պատասխանատվության սկզբունքները:
7. Նկարագրել ԱԲ մարտահրավերները՝ կապված աշխատանքային շուկայի, մարդկային որոշումների և տեխնոլոգիական կախվածության հետ:

Կկարողանա՝

1. Կիրառել տեղեկատվական և արհեստական բանականության տեխնոլոգիաներ՝ հետազոտական գործընթացների կազմակերպման և տվյալների մշակման մեջ:
2. Օգտագործել գեներատիվ ԱԲ գործիքներ՝ տեքստերի, ամփոփագրերի, վերլուծական հաշվետվությունների և ներկայացումների ստեղծման համար:
3. Կազմել և ձևակերպել արդյունավետ prompt-ներ՝ կիրառելով RACE, TAG, TRACE, CARE և այլ շրջանակներ:
4. Գնահատել և բարելավել ԱԲ մոդելի պատասխանների որակը՝ օգտագործելով SALT և LARF մոտեցումները:
5. Իրականացնել խորքային հետազոտություններ (Deep Research)՝ կիրառելով ChatGPT, Claude, Gemini, Perplexity.ai և այլ գործիքներ:
6. Գեներացնել մեդիա բովանդակություն (պաստառ, վիդեո, ձայն, կայք)՝ առանց ծրագրավորման (no-code) ԱԲ գործիքներով:
7. Քննարկել և վերլուծել ԱԲ էթիկական խնդիրները՝ հիմնվելով իրական կիրառությունների և օրինակների վրա:

8. Կիրառել պատասխանատու և էթիկորեն ընդունելի մոտեցումներ՝ ԱԲ գործիքների ընտրության և արդյունքների մեկնաբանման ժամանակ:
9. Կազմակերպել տվյալների հավաքագրում, մշակում և վիզուալիզացիա՝ օգտագործելով ժամանակակից SS և ԱԲ գործիքներ:
10. Մշակել բիզնես գործընթացների ավտոմատացման նախագծեր՝ make.com, n8n և նման գործիքների միջոցով:

Կտիրապետի՝

1. Ինտեգրել ԱԲ և SS տեխնոլոգիաները գիտահետազոտական, կրթական և բիզնես միջավայրում՝ ստեղծելով նորարարական լուծումներ:
2. Վերլուծել և մեկնաբանել ԱԲ մոդելների ստեղծած արդյունքները՝ հիմնվելով տվյալների որակի և վավերականության չափանիշների վրա:
3. Գեներացնել և ներկայացնել հետազոտական արդյունքներ՝ վեբ-կայքերի, ինֆոգրաֆիկների և ներկայացումների ձևաչափով:
4. Համագործակցել և հաղորդակցվել թվային միջավայրում՝ կիրառելով ԱԲ գործիքներ թիմային հետազոտությունների և նախագծերի կառավարման մեջ:
5. Գնահատել և ընտրել առավել համապատասխան ԱԲ և SS գործիքները՝ տվյալ հետազոտության կամ կիրառության համար:
6. Գնահատել և ընտրել ամենահամապատասխան SS և ԱԲ գործիքները՝ հաշվի առնելով տվյալ խնդրի էթիկական և պրոֆեսիոնալ պահանջները:
7. Խթանել պատասխանատու, էթիկապես կայուն ԱԲ մշակույթ՝ հետազոտական և գործնական միջավայրերում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ (SS): Տեղեկատվական տեխնոլոգիայի հասկացությունը: Տեղեկատվական տեխնոլոգիա և տեղեկատվական համակարգ: Տեղեկատվական տեխնոլոգիաների բաղադրիչները: Տվյալների մշակման և վերլուծության SS: Կառավարման SS: Գրասենյակի ավտոմատացում: Որոշումների ընդունմանն աջակցող SS: SS-ները կազմակերպման կառավարման ոլորտում: **Թեմա 2.** Արհեստական բանականություն (ԱԲ): ԱԲ հիմնական հասկացությունները: Գեներատիվ ԱԲ կիրառությունների օրինակներ: ԱԲ զարգացումներ և տնտեսության վերափոխումը (AI Index Report): Գեներատիվ ԱԲ համակարգեր և կիրառություններ: **Թեմա 3.** Ամպային տեխնոլոգիաներ: Էլեկտրոնային տեքստային փաստաթղթերի մշակման ամպային գործիքներ: Էլեկտրոնային աղյուսակների մշակման ամպային գործիքներ: Պլանավորման ամպային գործիքներ (օրացույց, notion, meetings): **Թեմա 4.** ԱԲ հրահանգների մշակման (Prompt Engineering) հիմունքներ: Prompt-ների օրինակներ և գրադարաններ: Prompt-ի հատկությունները (Simple, Clear, Creative): GenAI ուսուցման ձևեր (Zero-shot, One/ Few-shot): GenAI սահմանափակումներ (տվյալներ, հալուցինացիաներ, գերուսուցում- overfitting): Prompt-ի 5 տարրերը (instructions, persona, output format, context, examples): Output Control Techniques - SALT (Style, Audience, Length, Tone): Պատասխանների գնահատում – LARF: Հատուկ սիմվոլների կիրառում - Prompt Formatting: GPT frameworks կիրառություններ և օրինակներ: GPT frameworks (RACE, TAG, TRACE, CARE և այլն): Հրահանգների կիրառման օրինակներ (Administrative Support, Communications, Executives, Project Management և այլն): **Թեմա 5.** Հետազոտությունների իրականացում, փաստաթղթերի վերլուծություն և ամփոփում: Փաստաթղթերի, ամփոփագրերի ստեղծում, ինֆորմացիայի դուրսբերում, վերլուծություն, հաշվետվությունների գեներացում, հարց ու պատասխան: Փաստաթղթերի հիման վրա պրեզենտացիայի գեներացում (chatPDF): Խորքային հետազոտությունների իրականացում - Deep research (ChatGPT, Google Gemini, Claudeai, Perplexity.ai, https://www.deepseek.com): Հետազոտության արդյունքների ներկայացում (web կայք, ինֆոգրաֆիկներ և այլն): Project-ի ստեղծում (տվյալներ, ֆայլեր, առաջադրանքներ- Claude.AI, NotebookLM): **Թեմա 6.** Ցուցադրությունների պատրաստման ԱԲ

տեխնոլոգիաներ: Շնորհանդեսների գեներացում և խմբագրում: Պաստառների, վիզուալ հաշվետվությունների ստեղծում: Առանց կոդի web կայքի գեներացում: **Թեմա 7.** Մեդիա բովանդակության մշակման ԱԲ տեխնոլոգիաներ: Պատկերների սինթեզում և խմբագրում: Ձայնի սինթեզում և խմբագրում: Ավատարի ստեղծում: Տեսաշարերի սինթեզում: **Թեմա 8.** Տվյալների մշակման և վերլուծության տեխնոլոգիաներ: Տվյալների հավաքագրում ԱԲ գործիքներով: Տվյալների մշակում: Տվյալների վերլուծություն և վիզուալիզացիա: Տվյալահեն որոշումների կայացում: **Թեմա 9.** Բիզնես պրոցեսների ավտոմատացում: Նախագծերի կառավարման գործիքներ: ԱԲ agent-ներ: Ավտոմատացում ԱԲ գործիքներով (make.com, n8n): **Թեմա 10.** Արհեստական բանականության էթիկա և մարտահրավերներ: ԱԲ-ի պատասխանատու կիրառություն: Էթիկական սկզբունքներ (թափանցիկություն, արդարություն, հաշվետվողականություն): Տվյալների գաղտնիություն և պաշտպանություն: ԱԲ-ի սոցիալական և իրավական հետևանքներ: ԱԲ-ի ապագա զարգացումների էթիկական ուղղություններ:

2. Մասնագիտացված պատրաստման դասընթացներ

2.1 Պարտադիր դասընթացներ

23/Մ17 - Ներառական կրթության մանկավարժություն և հոգեբանություն – (4 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
3-րդ կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակը.
Դասընթացի նպատակն է ներկայացնել մասնագիտական կրթության գործընթացում, ներառական կրթության ներդրման հետ կապված մանկավարժական, հոգեբանական հիմնախնդիրները, սկզբունքներն ու մեթոդները՝ սովորողներին զինելով ներառականության միջավայրում անհրաժեշտ մանկավարժական և հոգեբանական կարողություններով, հմտություններով, նպաստել ներառական կրթության կազմակերպման մշակույթի ձևավորմանը, մասնագիտական և անձնային որակների ու կոմպետենտությունների զարգացմանը:
Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա՝

- մեկնաբանել ներառական կրթության էությունը, զարգացման հեռանկարները, ԿԱՊԿՈՒԵ հոգեբանական առանձնահատկությունների նկարագրերը,
- հիմնավորել և վերլուծել ԿԱՊԿՈՒԵ հոգեբանական առանձնահատկությունների հիման վրա գործընթացների կազմակերպման ձևերն ու մոտեցումները
- ճանաչել մասնագիտական կոնսիլիումի անդամների միջև փոխհամագործակցության ու թիմային աշխատանքի կազմակերպման սկզբունքները:

Կկարողանա՝

- կազմակերպել ԿԱՊԿՈՒԵ հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան հաղորդակցման, ուսուցման, դաստիարարակության ու զարգացման միջավայր,
- ձևավորել՝ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) ԿԱՊԿՈՒ սովորողների հետ հոգեբանական աշխատանքների պլաններ: Վերլուծել և կազմակերպել դրանց իրականացման ուղիները:

Կտիրապետի՝

- ԿԱՊԿՈՒԵ հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան աշխատանքների կազմակերպման, նրանց ուսումնական գործընթացում լիարժեք ներառելու հոգեբանական միջոցների ու հնարների ընտրության հիմնավորման ու համապատասխան գործընթացների կազմակերպման հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հոգեբանամանկավարժական հետազոտության կազմակերպումը՝ որպես ներառական կրթության ապահովման կարևոր գործընթաց: **Թեմա 2**. Հոգեբանական դիագնոստիկա: Հոգեդիագնոստիկ մեթոդների դասակարգում, վալիդություն, մաթեմատիկական վերլուծություն: **Թեմա 3.** ԿԱՊԿՈՒ երեխաների անձի եվ հոգեբանական վիճակի ուսումնասիրություն ուսուցման գործընթացում: **Թեմա 4**. Հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ: **Թեմա 5.** Սթրեսը որպես հոգեբանական երևույթ: **Թեմա 6**. ֆրուստրացիան որպես հոգեբանական երևույթ: **Թեմա 7**. Լսողության, տեսողության, հուզակամային, վարքային, հենաշարժողական համակարգի սահմանափակ հնարավորությունների անձանց սոցիալականացման առանձնահատկությունները: **Թեմա 8**. Զարգացման սահմանափակ կարողություններով երեխաների ընտանեկան դաստիարակության ժամանակակից պահանջները: **Թեմա 9.** Շտկողական աշխատանքների մեթոդները:

23/Մ4 - Կրթության համակարգի կառավարում (4 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
1-ին կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՀՀ կրթական հաստատությունների կառավարման հիմնահարցերին, գաղափար տալ հանրակրթական դպրոցի բարեփոխումների ներկա ռազմավարության մասին:

Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ հայ դպրոցի և ընդհանրապես կրթական համակարգի բարեփոխումների ներկա ռազմավարության էությունը, նոր կրթակարգերը, կրթական չափորոշիչները, կրթության, հանրակրթության մասին և այլ օրենքները:

Կկարողանա՝ կողմնորոշվել ազգային կրթության օրենսդրական դաշտում՝ նպաստելով դպրոցի բարեփոխումների ընթացիկ գործընթացին:

Կտիրապետի՝ նախադպրոցական, հանրակրթական, հատուկ, արտադպրոցական, բուհական և այլ կրթական հաստատությունների գործունեության բարեփոխումների ռազմավարությանը, որը անհրաժեշտ է ապագա մանկավարժին իր հետագա գործունեության ընթացքում:

Բովանդակություն.

Թեմա 1. Կրթությունն իբրև սոցիալական գործընթաց և սոցիալական ինստիտուտ: **Թեմա 2.** Հայկական կրթության հակիրճ պատմությունը: **Թեմա 3.** ՀՀ կրթության համակարգը: **Թեմա 4**. Կառավարման գործընթացի մեթոդաբանությունը: **Թեմա 5**. Կառավարման ոճեր, ղեկավարման տեսական մոդելներ: **Թեմա 6.** ՀՀ կրթության համակարգի զարգացման ներկա ռազմավարությունը: **Թեմա 7**. Բարեփոխումները կրթության ոլորտում: **Թեմա 8.** Կրթության համակարգի կառավարում: **Թեմա 9**. Կրթության կառավարման նորմատիվային փաստաթղթերը: **Թեմա 10**. Չափորոշիչ-ծրագիր-դասագիրք կարգավորված եռյակի բաղադրատարրերի կապը:

23/Մ13 - Մանկավարժական արժեբանություն (4 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել գիտելիքներ մանկավարժական արժեբանության տեսական մեթոդաբանական հիմունքների մասին, արժեքային աշխարհընկալում՝ հասկանալու համար կյանքի երևույթների բարոյագեղագիտական կողմը, արժեքային մոտեցման դիրքերից գնահատել կրթամշակութային արժեքները, մասնավորապես կրթությունը որպես համամարդկային արժեք, մեկնաբանել մանկավարժական արժեբանության տեղն ու դերը ընդհանուր արժեբանության մեջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. մանկավարժական արժեբանության տեսական ասպեկտները
2. մանկավարժական արժեբանության մեթոդական հիմունքները
3. արժեքի գաղափարը և նրա զարգացումը արժեբանության մեջ
4. կրթական արժեքների աստիճանակարգը

Կկարողանա՝

1. մեկնաբանել մանկավարժական արժեբանության հիմնական հասկացությունները
2. վերլուծել արժեքային գիտակցության, արժեքային հարաբերության, արժեքային վարքագի իմաստները
3. որոշել ուսանողների արժեքային կողմնորոշման ուղղվածությունը՝ օգտագործելով դասընթացի մեթոդական զինանոցը
4. բնութագրել արժեբանական բաղադրիչի դերն ու տեղը ուսուցչի մասնագիտա-մանկավարժական և մեթոդաբանական մշակույթում
5. դրսևորել արժեքային հարաբերություն շրջապատող աշխարհի նկատմամբ

Կտիրապետի՝

1. մանկավարժական արժեբանության հիմունքներին
2.մանկավարժական արժեբանության հետազոտության մեթոդաբանական մոտեցումներին
3. արժեքային աշխարհընկալմանը
4. տեսական ուսումնասիրության արդյունքները հետագա մասնագիտական գործունեության մեջ կիրառելու և ստեղծագործական կարողությունների:

Բովանդակություն.

Թեմա 1. Մանկավարժական արժեբանության տեսամեթոդական հիմունքները: **Թեմա 2.** Արժեքային պատկերացումները և դրանց զարգացումը մանկավարժական մտքի պատմության մեջ: **Թեմա 3**. Արժեքի գաղափարը և նրա զարգացումը հայ մանկավարժական մտքի պատմության մեջ: **Թեմա 4**. Մանկավարժական արժեբանության հետազոտության մեթոդաբանական մոտեցումները: **Թեմա 5.** Մանկավարժական արժեբանության առաջացման և զարգացման գործոնները: **Թեմա 6**. Մանկավարժական արժեբանության էությունը և բովանդակությունը: **Թեմա 7**. Արժեբանական բաղադրիչի դերն ու գործառույթը ուսուցչի մասնագիտա-մանկավարժական գործունության մեջ:

23/Մ14 - Մանկավարժական հաղորդակցություն – (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Մագիստրոսական դասընթացի նպատակն է ուսանողներին զինել տեսական և կիրառական գիտելիքներով մանկավարժական հաղորդակցման վերաբերյալ՝ նպաստելով նրանց մասնագիտական հաղորդակցման, միջանձնային կապի, ազդեցիկ խոսքի մշակմանը և կրթական միջավայրում հաղորդակցական դժվարությունների հաղթահարմանը:

Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա՝

1. Մանկավարժական հաղորդակցման տեսական հիմքեր,
2. կրթական հոգեբանության և սոցիոլոգիայի տեսություններ,
3. հաղորդակցման բարելավման ռազմավարություններ,
4. կոնֆլիկտների կառավարման մեթոդներ:

Կկարողանա՝

1. Մշակել հաղորդակցական ռազմավարություններ,
2. կիրառել ակտիվ լսելու մեթոդներ,
3. վերլուծել հաղորդակցական սխալներ,
4. ղեկավարել դասարանի հաղորդակցական միջավայրը:

Կտիրապտի՝

1. Էֆեկտիվ բանավոր և գրավոր հաղորդակցություն,
2. հանրային խոսքի զարգացում,
3. էմպատիկ հաղորդակցում,
4. հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում,
5. կոնֆլիկտների կարգավորում:

Բովանդակությունը.
Թեմա 1. Մանկավարժական հաղորդակցման էությունը և դերը կրթության մեջ: **Թեմա 2**. Հաղորդակցման հոգեբանական հիմքերը: **Թեմա 3**. Վերբալ և ոչ վերբալ հաղորդակցություն մանկավարժական միջավայրում: **Թեմա 4.** Կոնֆլիկտների կառավարում կրթական հաղորդակցության մեջ: **Թեմա 5.** Ակտիվ լսելու և հետադարձ կապի մեթոդներ: **Թեմա 6.** Հաղորդակցական խոչընդոտները կրթական գործընթացում: **Թեմա 7.** Հանրային խոսքի հմտություններ և ազդեցիկ հաղորդակցություն: **Թեմա 8.** Մեդիա հաղորդակցություն և թվային տեխնոլոգիաների կիրառումը մանկավարժության մեջ: **Թեմա 9.** Էթիկական սկզբունքները մանկավարժական հաղորդակցման մեջ: **Թեմա 10.** Մանկավարժական հաղորդակցման բարելավման ռազմավարություններ:

24/Մ2 - Անգլերենը ակադեմիական նպատակների համար. 1 – (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (14 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)
1-ին կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակը.
Դասընթացը նպատակ ունի ուսանողներին զինել գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, որոնք նրանց թույլ կտան գործածել գրագետ գիտական անգլերեն:
Ուսանողները կսովորեն կազմել գիտական տեքստեր ճիշտ գործածելով գիտական անգլերենին հատուկ բառերը, համատեքստը և գիտական ոճը: Կկարողանան ճիշտ և հմուտ կերպով կիրառել գիտական անգլերենին հատուկ գոյականները, ածականները բայերը, մակբայներն ու դրանցով կազմված հարադրություններն ու բառակապակցությունները: Կկարողանան ճիշտ գործածել գիտական անգլերենին հատուկ փոխաբերությունները, դարձվածքներն ու իդիոմները, հարադրավոր բայերը, բազմիմաստ բառերը, քանակի մասին խոսելիս գործածվող բառերն ու բառակապակցությունները: Ուսանողները կսովորեն հմտորեն կիրառել ուսումնական գործընթացին և առցանց կրթությանը վերաբերող հասկացությունները, գործածել «փաստ», «ապացույց» և «տվյալ» տերմինները գիտական հետազոտություններ կատարելիս: Կկարողանան կազմել ճիշտ ձևավորված անգլերեն դիմումներ: Կտիրապետեն գիտական աղբյուրների մասին խոսելիս պահանջվող բառապաշարին և պահանջվող տեխնիկային:

Դասընթացը ուսանողներին կզինի հագեցած բառապաշարով, որը պարբերաբար կկիրառվի և ուսանողների մոտ կդառնա կայուն գիտելիք:**Կրթական արդյունքները.**

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. իմանալ և տարբերակել գիտական անգլերենին հատուկ բառերը և դրանց գործածության համատեքստը, տարբերակել գիտական ոճը,
2. իմանալ և տարբերակել գիտական անգլերենին հատուկ գոյականները, բայերը և ածականները, մակբայները, ինչպես նաև դրանց հարադրությունները,
3. իմանալ գիտական անգլերենին հատուկ փոխաբերությունները, դարձվածքներն ու իդիոմները, հարադրավոր բայերը և դրանց գործածման առանձնահատկությունները,
4. իմանալ գիտական անգլերենին հատուկ բազմիմաստ բառերը, քանակի մասին խոսելիս գործածվող կապակցությունները և դրանց առանձնահատկությունները,
5. իմանալ և տարբերակել ուսումնական գործընթացին վերաբերող հասկացությունները բրիտանական անգլերենում և ամերիկյան անգլերենում,
6. իմանալ «փաստի», «ապացույցի» և «տվյալի» միջև առկա տարբերությունները անգլերենում, տարբերակել դիմումների ձևերը, դրանց նպատակը և բաղադրիչները,
7. իմանալ գիտական աղբյուրների մասին խոսելիս պահանջվող բառապաշարը և պահանջվող տեխնիկան,
8. մտապահել թեմաներին առնչվող գիտական բառապաշարը:

Կկարողանա

1. գործածել գիտական անգլերենին հատուկ բառերը համապատասխան համատեքստում, տարբերակել գիտական ոճը,
2. կիրառել գիտական անգլերենին հատուկ գոյականները, բայերը, մակբայներն ու ածականները, ինչպես նաև դրանց հարադրությունները,
3. կիրառել գիտական անգլերենին հատուկ փոխաբերությունները, դարձվածքներն ու իդիոմները, հարադրավոր բայերը՝ հաշվի առնելով դրանց գործածման առանձնահատկությունները,
4. գործածել գիտական անգլերենին հատուկ բազմիմաստ բառերը, քանակի մասին խոսելիս գործածվող կապակցությունները՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները,
5. մեկնաբանել բրիտանական անգլերենում և ամերիկյան անգլերենում առկա ուսումնական գործընթացին վերաբերող հասկացությունների տարբերությունները,
6. մեկնաբանել «փաստի», «ապացույցի» և «տվյալի» միջև առկա տարբերությունները անգլերենում, տարբերակել դիմումների ձևերը, դրանց նպատակը և բաղադրիչները,
7. գործածել գիտական աղբյուրների մասին խոսելիս պահանջվող բառապաշարը և պահանջվող տեխնիկան,
8. թեմայի հետ կապված գիտական բառապաշարի գործածում:

Կ**տիրապետի**

1. կազմել գիտական տեքստեր ճիշտ գործածելով գիտական անգլերենին հատուկ բառերը, համատեքստը և գիտական ոճը,
2. կազմել գիտական տեքստեր ճիշտ և հմուտ կերպով կիրառելով գիտական անգլերենին հատուկ գոյականները, բայերը, ածականներն ու մակբայները և դրանց հարադրությունները,
3. կազմել գիտական շարադրանք հմտորեն գործածելով փոխաբերությունները, դարձվածքներն ու իդիոմները, հարադրավոր բայերը, բազմիմաստ բառերը, քանակի մասին խոսելիս գործածվող կապակցությունները,
4. հմտորեն կիրառել ուսումնական գործընթացին վերաբերող հասկացությունները,

5. հմտորեն գործածել «փաստ», «ապացույց» և «տվյալ» տերմինները գիտական հետազոտություններ կատարելիս,
6. հմտորեն խոսել հետազոտության մեջ գործածված գիտական աղբյուրների մասին:

Բովանդակություն.

Թեմա 1. *What is special about academic English..* **Թեմա 2.** Key nouns, Key adjectives **Թեմա 3.** Key verbs, Key adverbs. **Թեմա 4.** Metaphors and idioms, Phrasal verbs in academic English, **Թեմա 5.** Key quantifying expressions. **Թեմա 6.** Words with several meanings.

24/Մ3 - Անգլերենը ակադեմիական նպատակների համար. 2 – (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (14 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)
2-րդ կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողներին զինել գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, որոնք թույլ կտան գիտության տարբեր ոլորտների հետ առնչվելիս գործածել ճիշտ գիտական անգլերեն:

Ուսանողները կսովորեն հմտորեն գործածել գիտական անգլերենում գործածվող կայուն արտահայտությունները, հիմնական վիճակագրական տերմինները, այն լեզվական միջոցները, որոնք գործածվում են գաղափարների, իմաստի և տեսակետների մասին խոսելիս: Ուսանողները կսովորեն վարժ գործածել բայ-նախդիր, գոյական-նախդիր հարադրությունները, ակադեմիական անգլերենին հատուկ բայական, անվանական հարադրությունները, նախդրավոր կապակցությունները: Կկարողանան ձևակերպել հետազոտության նպատակներն ու արդյունքները, արտահայտել պատճառահետևանքային կապերը: Ուսանողները կսովորեն կազմել գիտական տվյալներն արտացոլող գծագրեր, դիագրամներ: Ճիշտ կգործածեն այն բայերն ու արտահայտությունները, որոնք անհրաժեշտ են այլոց ասածը հաղորդելու համար: Կկարողանան խոսել կրթության և դրա արժեքի մասին: Ճիշտ կգործածեն ժամանակը նկարագրող բառերն ու արտահայտությունները:

Դասընթացը ուսանողներին կապահովի նաև նշված թեմաների վերաբերյալ հագեցած բառապաշարով, որը պարբերաբար կկիրառվի և ուսանողների մոտ կդառնա կայուն գիտելիք:

Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա

1. գիտական անգլերենում գործածվող կայուն արտահայտությունները, բայ-նախդիր, գոյական-նախդիր հարադրությունները, ակադեմիական անգլերենին հատուկ բայական, անվանական հարադրությունները, նախդրավոր կապակցությունները,
2. հիմնական վիճակագրական տերմինները, գաղափարների, իմաստի և տեսակետների մասին խոսելիս գործածվող սկզբունքներն ու բառապաշարը,
3. հետազոտության նպատակը և արդյունքը, պատճառահետևանքային կապերի արտահայտման հիմնական սկզբունքները և լեզվական միջոցները,
4. գիտական տվյալներն արտացոլող գծագրերի և դիագրամների տեսակները, այն բայերն ու արտահայտությունները, որոնք անհրաժեշտ են այլոց ասածը հաղորդելու համար:
5. ժամանակի մասին խոսելիս անհրաժեշտ բառերն ու արտահայտությունները:
6. կրթության և դրա արժեքի մասին:

Կկարողանա

1. տարբերել գիտական անգլերենում գործածվող կայուն արտահայտությունները, բայ-նախդիր, գոյական-նախդիր հարադրությունները, ակադեմիական անգլերենին

հատուկ բայական, անվանական հարադրությունները, նախդրավոր կապակցությունները,
2. տարբերել և բնորոշել հիմնական վիճակագրական տերմինները, գաղափարների, իմաստի և տեսակետների մասին խոսելիս գործածվող սկզբունքներն ու բառապաշարը,
3. տարբերակել հետազոտության նպատակը և արդյունքը, կիրառել պատճառահետևանքային կապերի արտահայտման հիմնական սկզբունքները և լեզվական միջոցները,
4. կազմել գիտական տվյալներն արտացոլող գծագրեր և դիագրամներ, կարողանալ հաղորդել այլոց ասածը՝ գործածելով անհրաժեշտ լեզվական միջոցներ:
5. կիրառել ժամանակի մասին խոսելիս անհրաժեշտ բառերն ու արտահայտությունները:
6. խոսել կրթության և դրա արժեքի մասին:

Կտիրապետի

1. վարժ գործածել գիտական անգլերենում գործածվող կայուն արտահայտությունները, բայ-նախդիր, գոյական-նախդիր հարադրությունները, ակադեմիական անգլերենին հատուկ բայական, անվանական հարադրությունները, նախդրավոր կապակցությունները,
2. վերլուծել վիճակագրական տվյալները, արտահայտել գաղափարներ, վարժ խոսել իմաստի և և տեսակետների մասին,
3. հստակ շարադրել հետազոտության նպատակը և արդյունքը, վերլուծել պատճառահետևանքային կապերը,
4. կազմել և վերլուծել գիտական տվյալներն արտացոլող գծագրերն ու դիագրամները, հմտորեն հաղորդել այլոց ասածը:
5. վարժ գործածել ժամանակը նկարագրող բառերն ու արտահայտությունները:
6. մասնակցել կրթության և դրա արժեքի մասին բանավեճերին:

Բովանդակություն.

Թեմա 1. Nouns and the words they combine with Nouns and Prepositions Statistics. **Թեմա 2.** Adjective and noun combinations. **Թեմա 3.** Verbs and the words they combine with Verbs and prepositions Cause and effect. **Թեմա 4.** Prepositional phrases **Թեմա 5.** Fixed expressions. **Թեմա 6.** Analysis of results. Talking about meaning.

24/Մ4 - Անգլերենը ակադեմիական նպատակների համար. 3 – (3 կրեդիտ)
Շաբաթական 3 ժամ (14 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)
3-րդ կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողներին զինել գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, որոնք նրանց թույլ կտան գիտության տարբեր ոլորտների հետ առնչվելիս գործածել ճիշտ ակադեմիական անգլերեն:

Ուսանողները կսովորեն վարժ ձևակերպել հետազոտության մեթոդները, ապահովել տեքստի կապակցվածությունը, ճիշտ գործածել վստահության տարբեր աստիճաններ արտահայտող բառերը, փաստարկների ձևակերպման և ներկայացման համար անհրաժեշտ բառապաշարը, կտիրապետեն խնդիրների, իրավիճակների և գործընթացների, փոփոխության քննարկման համար անհրաժեշտ բառապաշարին և կառույցներին: Ուսանողները կտիրապետեն ամփոփելիս և եզրահանգում կատարելիս, համեմատելիս և հակադրելիս, գնահատելիս և շեշտադրելիս, ինչպես նաև դասակարգելիս գործածվող

բառապաշարին և արտահայտություններին: Կսովորեն գործածել համապատասխան բառապաշար պրեզենտացիաներ ներկայացնելիս:
Դասընթացը ուսանողներին կզինի վերոնշյալ թեմաների հետ կապված հագեցած բառապաշարով, որը պարբերաբար կկիրառվի և ուսանողների մոտ կդառնա կայուն գիտելիք:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. հետազոտության մեթոդների մասին խոսելիս անհրաժեշտ բառապաշար,
2. տեքստի կապակցվածությունը ապահովող բառերն ու արտահայտությունները,
3. վստահության տարբեր աստիճաններ արտահայտող բառերը, փաստարկների ձևակերպման և ներկայացման համար անհրաժեշտ բառապաշարը, խնդիրների, իրավիճակների և գործընթացների, փոփոխության քննարկման համար անհրաժեշտ բառապաշարը և կառույցները,
4. ամփոփելիս և եզրահանգում կատարելիս, համեմատելիս և հակադրելիս, գնահատելիս և շեշտադրելիս, ինչպես նաև դասակարգելիս գործածվող բառապաշարը և արտահայտությունները,
5. բառապաշար պրեզենտացիաներ ներկայացնելիս:

Կկարողանա՝

1. գործածել հետազոտության մեթոդների մասին խոսելիս անհրաժեշտ բառապաշար,
2. գործածել տեքստի կապակցվածությունը ապահովող բառերն ու արտահայտությունները,
3. գործածել վստահության տարբեր աստիճաններ արտահայտող բառերը, փաստարկների ձևակերպման և ներկայացման համար անհրաժեշտ բառապաշարը, խնդիրների, իրավիճակների և գործընթացների, փոփոխության քննարկման համար անհրաժեշտ բառապաշարը և կառույցները,
4. տարբերել ամփոփելիս և եզրահանգում կատարելիս, համեմատելիս և հակադրելիս, գնահատելիս և շեշտադրելիս, ինչպես նաև դասակարգելիս գործածվող բառապաշարը և արտահայտությունները,
5. գործածել համապատասխան արտահայտություններ և բառեր պրեզենտացիաներ ներկայացնելիս:

Կտիրապետի՝

7. վարժ գործածել գիտական անգլերենում գործածվող կայուն արտահայտությունները, բայ-նախդիր, գոյական-նախդիր հարադրությունները, ակադեմիական անգլերենին հատուկ բայական, անվանական հարադրությունները, նախդրավոր կապակցությունները,
8. վերլուծել վիճակագրական տվյալները, արտահայտել գաղափարներ, վարժ խոսել իմաստի և և տեսակետների մասին,
9. հստակ շարադրել հետազոտության նպատակը և արդյունքը, վերլուծել պատճառահետևանքային կապերը,
10. կազմել և վերլուծել գիտական տվյալներն արտացոլող գծագրերն ու դիագրամները, հմտորեն հաղորդել այլոց ասածը:
11. վարժ գործածել ժամանակը նկարագրող բառերն ու արտահայտությունները:
12. մասնակցել կրթության և դրա արժեքի մասին բանավեճերին:

Բովանդակություն.

Թեմա 1. Presenting an argument, Degrees of certainty. **Թեմա 2.** Describing research methods Classifying. **Թեմա 3.** Making connections, Comparing and contrasting. **Թեմա 4.** Describing problems, Describing situations. **Թեմա 5.** Evaluation and emphasis, Describing change. **Թեմա 6.** Organising your writing Making a presentation. **Թեմա 7.** Processes and procedures, Summary and conclusion.

24/Մ11 - Մասնագիտական օտար լեզվի զարգացում. 1 – (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (14 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)
1-ին կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակը.
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել C2 մակարդակի լեզվական կարողություններ՝ կենտրոնանալով բարդ բառապաշարի, քերականության և հաղորդակցման նրբերանգների վրա, ինչպես նաև ամրապնդել քննության պատրաստվածության հիմքային հմտությունները: Սա ներառում է՝ բանավոր և գրավոր հաղորդակցման արդյունավետ և հստակ արտահայտման զարգացում բարդ թեմաներում՝ առօրյա, մշակութային և ակադեմիական միջավայրերում, բարդ տեքստերի վերլուծություն՝ հիմնական և ենթատեքստային իմաստների բացահայտման միջոցով, լեզվական միջոցների ճիշտ և ճկուն կիրառություն՝ C2 մակարդակի քերականական և բառապաշարային հմտությունների համադրմամբ, Cambridge C2 Proficiency քննությանը նախապատրաստման հիմքային կարողությունների ձևավորում՝ ռազմավարությունների օգտագործմամբ:
Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա՝
1. Ներգրավված գիտելիքներ էթիկայի, առողջության, անձի զարգացման և բնական միջավայրի վերաբերյալ:
2. C2 մակարդակի քերականական և բառապաշարային հմտությունների ամրապնդում:
3. Տեքստերի, ելույթների և հաղորդակցական իրավիճակների վերլուծական մոտեցում:

Կկարողանա՝
1. Օգտագործել լեզուն բարդ թեմաներում՝ համադրված էմոցիաների և փաստարկների հետ:
2. Ստեղծել հստակ և տրամաբանական գրավոր և բանավոր տեքստեր՝ ներկայացնելու սեփական տեսակետը կամ վերլուծությունը:
3. Բարձր մակարդակի քննության ձևաչափերին համապատասխան ինքնուրույն պատրաստվելու կարողություն:

Կտիրապետի՝
1. Բարդ բանավոր ու գրավոր արտադրության կատարելագործում՝ նվազագույն սխալներով և մշակված ոճով:
2. Ընդգրկել լծված լսողական և ընթերցողական ռազմավարություններ՝ նյութի լիակատար ընկալման համար:
3. Կատարել ինքնավերլուծություն և ինքնասրբագրում՝ հաղորդակցման որակը բարձրացնելու նպատակով:

Բովանդակությունը.
Unit 1. Ring the changes. **Unit 2.** Expectation. **Unit 3.** Strange behaviour. **Unit 4.** Sweet rituals. **Unit 5.** Revision (Units 1–4). **Unit 6.** The consumer society. **Unit 7.** The sound of music.

24/Մ12 - Մասնագիտական օտար լեզվի զարգացում 2 – (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (14 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)
2-րդ կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ զարգացնել C2 մակարդակի առաջադեմ լեզվական կարողություններ՝ աշխատելով բարդ, բազմազան և արդիական թեմաների շուրջ: Այս միավորները ուղղված են ուսանողների վերլուծական, քննադատական մտածողության և հաղորդակցման ունակությունների ամրապնդմանը ինչպես ակադեմիական, այնպես էլ մասնագիտական միջավայրերում, միաժամանակ շարունակելով պատրաստվել Cambridge

C2 Proficiency քննությանը: Սա ներառում է՝ բարդ տեքստերի վերլուծություն և մեկնաբանություն, այդ թվում՝ տեսողական, գրավոր և բազմամեդիա աղբյուրների վրա հիմնված, արդյունավետ բանավոր և գրավոր հաղորդակցություն հասարակություն, քաղաքային կյանք, գլոբալացում, էթիկա և տեխնոլոգիական նորարարություն թեմաներով, լեզվի սահուն և ճկուն կիրառություն, ներառյալ առաջադեմ բառապաշար, իմաստային արտահայտություններ և բարդ քերականական կառուցվածքներ, C2 Proficiency քննության ռազմավարությունների կիրառում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. Կազմակերպված գիտելիք գլոբալ, սոցիալական և տեխնոլոգիական գործընթացների մասին:
2. Մշակութային, պատմական և գիտական թեմաների վերաբերյալ խորքային գիտելիքներ:
3. Լեզվական նրբերանգների, իմաստային շերտերի և տեսողական/հնչողական արտահայտությունների ըմբռնում:

Կկարողանա՝

1. Արտահայտվել բարդ և բազմաշերտ թեմաներում՝ օգտագործելով բանավոր և գրավոր խոսքի բարձրակարգ տեխնիկաներ:
2. Վերլուծել լրատվամիջոցների, հոդվածների և ակադեմիական տեքստերի բովանդակությունը և տրամաբանությունը:
3. Օգտագործել խոսքի ոճաբանական, մշակութային և անձնական նպատակներին համապատասխան ռազմավարություններ:

Կտիրապետի՝

1. Գրավոր աշխատանքների պատրաստում՝ արհեստականության նվազեցմամբ և ուսումնական/աշխատանքային պահանջներին համապատասխան:
2. Բանավոր ներկայացումներ և քննարկումներ՝ խիստ ճշգրիտ և լիովին հասկանալի լսարանի համար:
3. Տարբերակային լսողական և ընթերցողական հմտությունների կիրառում՝ բարդ նյութերի արագ ընկալման համար:

Բովանդակությունը.

Unit 8. Before your very eyes. **Unit 9**. Urban jungle. **Unit 10**. Revision (Units 6–9). **Unit 11**. Fitting in. **Unit 12**. Globalisation. **Unit 13**. For better, for worse. **Unit 14**. At the cutting edge.

24/Մ13 - Մասնագիտական օտար լեզվի զարգացում. 3 – (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (14 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին C2 մակարդակի բարձրագույն լեզվական կարողությունների զարգացման, ուշադրության սուբյեկտիվ և նրբերանգային տարբերությունների ընկալման, ինչպես նաև բարդ թեմաների՝ էթիկա, առողջապահություն, անձնական զարգացում և բնապահպանություն, համարժեք քննարկման և արտահայտման հմտությունների ձևավորման միջոցով:

Դասընթացի նպատակը ներառում է բարդ, նրբերանգային և միջառարկայական տեքստերի վերլուծություն, հասկանալ ենթատեքստը և հստակ արտահայտել սեփական տեսակետը, գրավոր և բանավոր հաղորդակցման արդյունավետությունը՝ բարդ թեմաներում անձնական, սոցիալական և էթիկական ասպեկտները ընդգրկելով, լեզվի ճկուն և ճիշտ կիրառություն՝ ընդգրկելով առաջադեմ բառապաշար, idiomatic expressions և բազմաբարդ քերականական կառուցվածքներ, C2 Proficiency քննության ռազմավարությունների կիրառություն,

ապահովելով հստակ, տրամաբանական և համահունչ արտահայտություն՝ գրավոր և բանավոր:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. Ներգրավված գիտելիքներ էթիկայի, առողջության, անձի զարգացման և բնական միջավայրի վերաբերյալ:
2. C2 մակարդակի քերականական և բառապաշարային հմտությունների ամրապնդում:
3. Տեքստերի, ելույթների և հաղորդակցական իրավիճակների վերլուծական մոտեցում:

Կկարողանա՝

1. Օգտագործել լեզուն բարդ թեմաներում՝ համադրված էմոցիաների և փաստարկների հետ:
2. Ստեղծել հստակ և տրամաբանական գրավոր և բանավոր տեքստեր՝ ներկայացնելու սեփական տեսակետը կամ վերլուծությունը:
3. Բարձր մակարդակի քննության ձևաչափերին համապատասխան ինքնուրույն պատրաստվելու կարողություն:

Կտիրապետի՝

1. բանավոր ու գրավոր խոսքի կատարելագործում՝ նվազագույն սխալներով և մշակված ոճով:
2. Ընդգրկել լսողական և ընթերցողական ռազմավարություններ՝ նյութի լիակատար ընկալման համար:
3. Կատարել ինքնավերլուծություն և ինքնասրբագրում՝ հաղորդակցման որակը բարձրացնելու նպատակով:

Բովանդակությունը.

Unit 15 – Revision (Units 11–14). Unit 16. Save the planet. Unit 17. Get fit, live longer! Unit 18. The daily grind. Unit 19. Hidden nuances. Unit 20. Revision (Units 16–19). Unit 21. Defining happiness.

24/Մ14 - Մասնագիտական օտար լեզվի զարգացում. 4 – (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (14 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ապահովել C2 մակարդակի առաջադեմ լեզվական կարողություններով՝ հնարավորության ընձեռմամբ՝

1. վերլուծել, համեմատել և քննարկել բարդ և միջառարկայական թեմաներ՝ անձնական, սոցիալական, մշակութային, փիլիսոփայական և գիտական ոլորտներում,
2. արտահայտել սեփական տեսակետը գրավոր և բանավոր հստակ, տրամաբանական և պրոֆեսիոնալ ձևով,
3. կիրառել քննության ռազմավարություններ և արդյունավետորեն պատրաստվել Cambridge C2 Proficiency վերջնական քննությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. Բառապաշար և արտահայտություններ՝ ինքնատիպ և բարդ թեմաների շուրջ (խնդիրներ, ազատություն, առեղծվածներ, հումոր, երջանկություն, առողջություն, բնապահպանություն, աշխատանք, մշակույթ, գլոբալացում, նորարարություն):
2. Ուսումնասիրության, վերլուծության և քննադատական մտածողության հիմունքներ տարբեր ոլորտներում:

3. Գրավոր և բանավոր արտահայտության ձևաչափեր՝ էսսե, ակնարկ, հոդված, զեկույց, բանավոր վերլուծություն:

Կկարողանա՝

1. Վերլուծել բարդ և միջառարկայական երևույթներ՝ ինտեգրելով տարբեր աղբյուրների տեղեկատվություն:
2. Համեմատել, գնահատել և քննարկել մշակութային, սոցիալական, էթիկական և գիտական հարցեր:
3. Օգտագործել լեզուն ճիշտ և ճկուն՝ գիտելիքները գրավոր և բանավոր արտահայտելու համար:
4. :

Կտիրապետի՝

1. Ստեղծել հստակ, տրամաբանական և համապարփակ գրավոր տեքստեր՝ էսսե, ակնարկ, զեկույց և քննության առաջադրանքներ:
2. Ներկայացնել և պաշտպանել տեսակետները բանավոր քննարկումներում, դասախոսություններում կամ ներկայացումներում՝ ներառելով փաստարկներ և օրինակներ:
3. Կիրառել C2 Proficiency քննության ռազմավարություններ, վերահսկել ժամանակը, վերանայել և խմբագրել տեքստերը, ապահովել բարձր մակարդակի հստակություն և ճշտություն:

Բովանդակությունը.

Unit 22. On freedom. **Unit 23.** The unexplained. **Unit 24.** A sense of humour. **Unit 25.** Revision (Units 21–24). Writing folders, Exam folders, Revision and Final test.

24/Մ9 – Գործարարական անգլերեն – (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (14 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Գործարարական անգլերեն դասընթացի հիմնական նպատակն է՝ մասնագետներին հնարավորություն տալ արդյունավետ, վստահ և նպատակային հաղորդակցվելու անգլերենով տարբեր բիզնես միջավայրերում: Դասընթացը ուղղված է ինչպես լեզվական հմտությունների՝ բառապաշարի, քերականության և արտասանության զարգացմանը, այնպես էլ գործնական հաղորդակցական կարողությունների ձևավորմանը:

Ուսանողները սովորում են մասնակցել հանդիպումների, վարել բանակցություններ, ներկայացնել շնորհանդեսներ, ունենալ հեռախոսազրույց և տիրապետել առցանց հաղորդակցության առանձնահատկություններին՝ օգտագործելով հստակ, համոզիչ և պրոֆեսիոնալ լեզվական միջոցներ: Դասընթացը միաժամանակ խթանում է միջմշակութային գիտակցությունը, ռազմավարական մտածողության դրսևորումը հաղորդակցության ժամանակ և զարգացնում այնպիսի փափուկ հմտություններ, ինչպիսիք են համոզիչ խոսքը, թիմային աշխատանքը և առաջնորդությունը:

Դասընթացի հիմնական նպատակն է զարգացնել մասնագիտական հաղորդակցման և տպավորիչ խոսքի հմտություններ անգլերենով, հնարավորություն ընձեռելով մասնագետներին՝ արդյունավետ գործունեություն իրականացնելու և հաջողությամբ համագործակցելու միջազգային բիզնես միջավայրում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. Գործարար անգլերենի հիմնական բառապաշարի, արտահայտությունների և լեզվական կառուցվածքների իմացություն:

2. Գործնական հաղորդակցման տարբեր ձևերի՝ հանդիպումների, շնորհանդեսների, բանակցությունների և բիզնես նամակագրության առանձնահատկությունների ըմբռնում:
3. Միջմշակութային հաղորդակցման սկզբունքների և միջազգային բիզնես միջավայրում կիրառվող հաղորդակցական նորմերի ճանաչում:
4. Փափուկ հմտությունների (soft skills)՝ համոզիչ խոսքի, համագործակցության և առաջնորդության համար անհրաժեշտ լեզվական դրսևորումների իմացություն:

Կկարողանա՝

1. Օգտագործել անգլերենը տարբեր մասնագիտական իրավիճակներում՝ հստակ, վստահ և նպատակային կերպով:
2. Ադապտացնել հաղորդակցության ոճը՝ տարբեր լսարանների, մշակույթների և մասնագիտական իրավիճակների պահանջներին համապատասխան:
3. Կազմակերպել և վարել բանակցություններ, շնորհանդեսներ և հանդիպումներ՝ արդյունավետ լեզվական միջոցների կիրառմամբ:
4. Օգտագործել հստակ, կառուցվածքային և դիվանագիտական լեզվական միջոցներ բիզնես նամակագրության և բանավոր հաղորդակցման մեջ:

Կտիրապետի՝

1. Համոզիչ և ազդեցիկ կերպով արտահայտել կարծիքներ, առաջարկներ և գաղափարներ անգլերենով:
2. Լսել, հասկանալ և արդյունավետորեն արձագանքել գործընկերների ու հաճախորդների խոսքին:
3. Կառուցել և պահպանել դրական մասնագիտական հարաբերություններ միջմշակութային միջավայրում:
4. Ցույց տալ հաղորդակցական ինքնավստահություն և նախաձեռնողականություն միջազգային բիզնես միջավայրում:

Բովանդակություն.

Թեմա 1. Developing a Persuasive Approach. **Թեմա 2.** English for Accounting: Discussing an Audit. **Թեմա 3.** Socializing: Starting a Conversation in English. **Թեմա 4.** Socializing: Keeping a Conversation Going. **Թեմա 5.** English for Projects: Managing Conflict with Contractors. **Թեմա 6.** Meeting in English: Managing the Discussion. **Թեմա 7.** Meeting in English: Starting a Meeting. **Թեմա 8.** Fostering a Culture of Collaboration. **Թեմա 9.** Interview English: First-Round Job Interviews. **Թեմա 10.** Business English Idioms about Technology. **Թեմա 11.** Advanced Interview Skills for Effective Hiring. **Թեմա 12.** English for Project Management: Reporting on Progress. **Թեմա 13.** Problem-Solving 1: Developing the Right Skills. **Թեմա 14.** English for Presentations: Questions and Answers.

24/Մ9 – Միջմշակութային հաղորդակցություն – (3 կրեդիտ)
Շաբաթական 3 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
3-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել միջմշակութային հաղորդակցության տեսության հիմնական հասկացություններին, ինչպես նաև ձևավորել հմտություններ արդյունավետ միջմշակութային հաղորդակցություն իրականացնելու համար:

Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա՝

1. Թվարկել մշակույթ հասկացության հիմնական առանձնահատկությունները;
2. Սահմանել «մշակույթ» եզրույթը ;
3. Ներկայացնել մշակութային ադապտացիայի հիմնական աստիճանները;
4. Նկարագրել հաղորդակցության գործընթացի կառուցվածքը;
5. Անվանել և նկարագրել հաղորդակցության խոչընդոտները;
6. Ձևակերպել միջմշակութային հաղորդակցության առանձնահատկությունները;
7. Ներկայացնել կրթության դերը միջմշակութային կոմպետենցիայի ձևավորման գործում:

Կկարողանա՝

1. Տարբերակել մշակույթի տեսակները;
2. Տարբերակել հաղորդակցության խոչընդոտները;
3. Կիրառել տարբեր ռազմավարություններ միջմշակութային հաղորդակցության գործընթացում;

Կտիրապետի՝

1. Կիրառել ձեռք բերված տեսական գիտելիքները և գործնական հմտությունները ամենօրյա իրավիճակներում և մասնագիտական գործընթացում:
2. Օգտագործել տեղեկատվական տարատեսակ աղբյուրներ / ինտերնետ ռեսուրսներ, էլ. գրադարաններ և այլն/ հետազոտական աշխատանքներում և ամենօրյա մասնագիտական գործունեության մեջ;
3. Ստեղծագործաբար կիրառել և զարգացնել ձեռք բերված գիտելիքները և կարողությունները:

Բովանդակություն.

Թեմա 1. Defining the culture: definition, importance, features. **Թեմա 2.** Theory of the cultural iceberg. **Թեմա 3.** The types of culture. **Թեմա 4.** The culture shock phenomenon. **Թեմա 5.** Culture and Language. The Sapeer-Whorf hypothesis (linguistic relativity). **Թեմա 6.** Culture and Language. The Sapeer-Whorf hypothesis (linguistic relativity). **Թեմա 7.** Cultural Identity. Definition, importance, aspects. **Թեմա 8.** Theory of communication. Communication: definition, importance, features, structure. **Թեմա 9.** Types of communication: verbal and non-verbal, formal and non-formal, written and oral, etc. **Թեմա 10.** Communication barriers. Types of barriers. Cultural aspect of communication. **Թեմա 11.** Intercultural communication. Multiculturalism. **Թեմա 12.** Intercultural competence. Assessing the level of intercultural awareness and intelligence. **Թեմա 13.** The role of education in intercultural understanding and awareness. **Թեմա 14.** Feedback. Closure of the course.

24/Մ8 – Գիտագործնական փաստարկման հիմունքներ – (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (14 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)
2-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ապահովել ուսանողներին գիտելիքներով և հմտություններով, որոնք անհրաժեշտ են արդյունավետ գիտական փաստարկներ կառուցելու և ներկայացնելու համար: Դասընթացի ավարտին ուսանողները կիմանան փաստարկների կառուցման և վերլուծության, տարբեր միջոցների կիրառմամբ դրանց հզորացման հիմնական սկզբունքները: Ուսանողները կկարողանան կիրառել համապատասխան բառապաշար, մեթոդներ և տեխնիկա փաստարկներ կառուցելիս, կկարողանան ապահովել գիտական տեքստերի կապակցվածությունն ու ամբողջականությունը: Ուսանողները կգնահատեն և կմշակեն փաստարկներ, արդյունավետ կերպով կներկայացնեն դրանք գիտական քննարկումների, բանավեճերի և շնորհանդեսների ներկայացման ժամանակ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. փաստարկման հիմնական հասկացությունները, փաստարկների կառուցման, վերլուծության սկզբունքները:
2. վիզուալ տվյալների, գործընթացների նկարագրության և փաստերի դերը փաստարկներին աջակցելու և դրանք ընդլայնելու գործում:
3. գիտական համատեքստում փաստարկների կառուցման, տեքստի կապակցվածության ապահովման, տեղեկատվության արդյունավետ ամփոփման մեթոդները
4. Գրավոր և բանավոր գիտական հաղորդակցության մեջ հստակության, կապակցվածության և տրամաբանական հոսքի կարևորությունը:

Կկարողանա՝

5. Գիտական համատեքստում վերլուծել և կառուցել փաստարկներ՝ դրանցում ներառելով վիզուալ տվյալների վերլուծություններ, գործընթացների նկարագրություններ:
6. Գնահատել և զարգացնել փաստարկները՝ ապահովելով դրանց հստակությունը, կապակցվածությունը և համոզիչ լինելը:
7. Ստեղծել լավ հիմնավորված փաստարկներ՝ օգտագործելով համապատասխան լեզվական միջոցներ, մեթոդներ և տեխնիկա:
8. Հստակ և տրամաբանական կառուցվածքների միջոցով գրավոր և բանավոր արդյունավետ փաստարկների ներկայացում:

Կտիրապետի

1. Ձևակերպել ապացույցների, փաստերի, տրամաբանության վրա հիմնված հստակ և համոզիչ փաստարկներ:
2. Հմտորեն զարգացնել փաստարկները՝ վիզուալ տեղեկատվության ներկայացման, գործընթացների նկարագրության և հիմնական գաղափարների ամփոփման միջոցով:
3. Ապահովել գիտական տեքստերի կապակցվածությունը, ամբողջականությունը և համոզիչ լինելը:
4. Քննադատորեն գնահատել փաստարկները, բացահայտել տրամաբանական սխալները և կատարել ուղղումներ:
5. Համոզիչ կերպով ներկայացնել փաստարկները գիտական քննարկումների, բանավեճերի և շնորհանդեսների ժամանակ:

Բովանդակություն.

Թեմա 1. Techniques for active listening and contributing ideas in scientific discussions. **Թեմա 2.** Methods for summarizing and reporting scientific discussions and findings. **Թեմա 3.** Identifying key factual information, definitions, and summarizing scientific texts. **Թեմա 4.** Analyzing and describing visual data (e.g., graphs, charts) in scientific contexts, using noun phrases with relative clauses. **Թեմա 5.** Effective note-taking techniques for scientific information, including bullet points, summaries, and diagrams. **Թեմա 6.** Recognizing and identifying main scientific arguments, supporting evidence, and persuasive language in research. **Թեմա 7.** Organizing and outlining scientific arguments, stating and supporting main arguments, and synthesizing citations and evidence in scientific writing. **Թեմա 8.** Understanding the structure of scientific texts and writing effective introductions and thesis statements. **Թեմա 9.** Recognizing and using signposting language in scientific texts and presentations. **Թեմա 10.** Analyzing and writing effective conclusions for scientific papers. **Թեմա 11.** Techniques for linking scientific ideas coherently and recognizing spoken punctuation in scientific lectures. **Թեմա 12.** Analyzing and writing clear descriptions of scientific processes and methods. **Թեմա 13.** Referring to and explaining visual scientific information, using signposting language in scientific presentations. **Թեմա 14.** Preparing and giving short scientific presentations based on visual aids (e.g., posters,

slides). **Թեմա 15.** Identifying, presenting, and synthesizing scientific arguments with evidence. **Թեմա 16.** Evaluating and discussing scientific arguments in seminars and preparing responses. **Թեմա 17.** Building scientific vocabulary using word families and suffixes, and creating complex words. **Թեմա 18.** Using synonyms effectively in scientific writing, deciding on their formality, and rewriting phrases.

24/Մ1 – Անգլախոս երկրների գրականություն – (4 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
2-րդ կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակը.
Ուումնասիրվող լեզվի երկրի գրականության ուսումնասիրումը նպաստում է ուսանողների կրթվածության ընդհանուր մակարդակի բարձրացմանը, որոշակի արժեքային համակարգի ձևավորմանը, վերլուծական հմտությունների զարգացմանը: Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ամբողջական և հիմնավորված գիտելիք տրամադրել անգլոամերիկյան գրականության կարևորագույն ստեղծագործությունների և պատմամշակութային ժամանակաշրջանների մասին:
Հարստացնել ուսանողների մտահորիզոնը, պատկերացում տալ աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին գրական երկերի միջոցով: Բացի այդ, գրական ստեղծագործությունները բնօրինակով ընթերցելը կնպաստի ուսանողների լեզվական հմտությունների կատարելագործմանը:
Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա՝

1. Կիմանա անգլերեն գրականության պատմական զարգացման հիմնական փուլերը՝ Վերածննդից մինչև ժամանակակից շրջան:
2. Կճանաչի դասական և ժամանակակից հեղինակների կյանքի, ստեղծագործական գործունեության և գաղափարական ուղղվածության հիմնական առանձնահատկությունները:
3. Կհասկանա անգլերեն գրականության և հասարակական, քաղաքական, փիլիսոփայական իրադարձությունների փոխազդեցությունը տարբեր դարաշրջաններում:
4. Կիմանա անգլերեն գրականության դերը և նշանակությունը համաշխարհային մշակույթի զարգացման մեջ:

Կկարողանա՝

1. Կկարողանա վերլուծել գրական տեքստերի կառուցվածքը, կերպարները, թեմաներն ու խորհրդանիշները:
2. Կկարողանա համադրել տարբեր գրողների ստեղծագործությունները՝ բացահայտելով գաղափարական և գեղարվեստական կապերը:
3. Կկարողանա գրական երկերը դիտարկել համաշխարհային և միջմշակութային համատեքստում:
4. Կկիրառի տեսական գիտելիքները գրական վերլուծության, քննարկման և հետազոտական աշխատանքի ընթացքում:

Կտիրապետի

1. Կզարգացնի քննադատական մտածողություն և վերլուծական մոտեցում գրական երևույթների նկատմամբ:
2. Կձևավորի գրավոր և բանավոր հմտություններ՝ գրական կարծիքները հիմնավոր ձևով արտահայտելու համար:
3. Կկարողանա կառուցել գիտական և վերլուծական տեքստեր՝ պահպանելով ակադեմիական ոճ և կառուցվածք:
4. Կզարգացնի գեղագիտական ընկալում, մշակութային գիտակցություն և էմպատիա՝ հասկանալու մարդկային փորձի բազմազան դրսևորումները գրականության միջոցով:

Բովանդակություն.

Թեմա 1. Classical Foundations of English Literature, Innovation in drama and poetry; exploration of human nature and moral complexity. Social commentary, irony, and the portrayal of individual identity within societal norms. Critique of Victorian social inequality and moral values. **Թեմա 2. Modernism and Literary Innovation,** Stream of consciousness, narrative experimentation, and urban modernity. Psychological depth, time and memory, and the role of women in modern society. Symbolism, Irish identity, and the interplay of myth and modernity.Political allegory and dystopian vision; the relationship between truth, language, and power. **Թեմա 3. The American Literary Tradition,** Freedom, moral conflict, and social satire in 19th-century America. Minimalist prose, endurance, and human dignity. Memory, trauma, and African American identity through poetic narrative. **Թեմա 3. Postcolonial and Global Voices.** Clash of African tradition and colonial influence; cultural self-definition. Magical realism and postcolonial history; the birth of modern India. Feminist dystopia exploring power, control, and resistance. Ethical and social conflicts in post-apartheid society.

24/Մ5 – Անգլիական վեպի պատմություն – (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
1-ին կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել մագիստրանտներին անգլիական վեպի պատմությանը, ինչպես նաև գրական ուղղությունների զարգացմանը:

Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա՝

1. Անգլիական վեպի կարևորագույն դրսևորումները 18-20-րդ դարերում,
2. անգլիական վեպի առանձնահատկությունները, նրա զարգացման հիմնական միտումները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա
/Կարողություն/.

1. կկարողանա համադրել անգլիական սոցիալական, հոգեբանական և փիլիսոփայական վիպատեսակները
2. պատկերացում կկազմի Դ. Դեֆոյի, Ջ. Սվիֆտի, Չ. Դիկկենսի, Բրոնտե քույրերի, Ջ.Ջոյսի, Դ. Լոուրենսի և մյուսների վիպական ժառանգության և գեղագիտական սկզբունքների մասին

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի
/Հմտություն/.

1. կտիրապետի անգլիական վեպի, նրա գլխավոր ներկայացուցիչների և ստեղծագործությունների վերաբերյալ աշխատանքներ, հոդվածներ պատրաստելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. 18-րդ դարի գրականության ընդհանուր բնութագիրը /գրական ուղղությունները և գրողները: Լուսավորական ռեալիզմը և լուսավորական վեպը: Դ. Դեֆոյի լուսավորական վեպը: Ջ. Լոկի փիլիսոփայությունը և Դ. Դեֆոյի վեպը:. .Ջ. Սվիֆտի 'Գուլիվերի ճանապարհորդությունը' վեպն իբրև լուսավորության արտահայտություն: Անգլիական սենտիմենտալ վեպը, նրա փիլիսոփայական և գեղագիտական հիմքերը: Լ. Ստեռնի 'Սենտիմենտալ ճամփորդություն' վեպը: Ռիչարդսոնի ստեղծագործությունը: Թեմա9. Անգլիական սոցիալական վեպը, նրա առանձնահատկությունները:.Հ. Ֆիլֆինգի սոցիալական վեպը: **Թեմա 2.** 19-րդ դ. անգլիական գրականության համապատկերը /ռոմանտիզմ, ռեալիզմ, նատուրալիզմ և սիմվոլիզմ/: Չ. Դիկկենսի սոցիալական վեպը իբրև ռոմանտիզմի և ռեալիզմի համադրություն: Ու. Թեքերեյի ռեալիստական վեպը /Սնափառության տոնավաճառ'/:.Շ. Բրոնտեի 'Ջեյն Էյր' վեպը. ընդհանուր բնութագիրը: Բրոնտեի 'Մոլեգին հողմերի դարավանդը': **Թեմա 3.** 19-րդ դ. 2-րդ կեսի վեպը /Ջ. Էլիոթ, Թ. Հարդի/, Օ. Ուալդի էսթետիզմը: Երիտասարդ կյանքի պաշտամունքը 'Դորիան Գրեի դիմանկարը' վեպում: Բարոյականը և գեղեցիկը 'Դորիան Գրեի դիմանկարը' վեպում: **Թեմա 4.** 20-րդ դարի 1-ին կեսի անգլիական վեպը /ռեալիզմի և մոդեռնիզմի վեպերը:.Ջ. Ջոյսի 'Ուիլսես' վեպը: Դ. Լորենս. 'Լեդի Չաթեռլիի սիրեկանը' **Թեմա 5**. 20-րդ դարի 2-րդ կեսի անգլիական վեպը, Գ. Գրին «Խաղաղ ամերիկացին»: Դարակեսի անգլիական փիլիսոփայական վեպը: Ուիլյամ Գոլդինգի «Ճանճերի տերը», Այրիս Մերդոկի «Սև արքայազնը»: Ջոն Ֆաուզի «Կոլեկցիոները»: Անգլիական վեպի հետագա զարգացումը:

24/Մ6 – Բազմալեզվադիդակտիկա – (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել բազմալեզվության հասկացությանը, աշխարհի լեզուների բազմազանությանը, Եվրոպայի լեզվաքաղաքականության հիմնական սկզբունքներին, ԼԻԻՀ-ի /Լեզուների իմացության և իրազեկության համաեվրոպական համակարգ/ CEFR (Common European Framework of Reference of Foreign Languages) հիմնական սկզբունքներին, CEFR մակարդակներին և ենթամակարդակներին, լեզուների ուսուցման հաղորդակցական մոտեցմանը, «կոմպետենցիա» և «ենթակոմպետենցիա» հասկացողություններին, Եվրոպական լեզվական թղթապանակին՝ որպես գնահատման այլընտրանքային գործիքի, վերջինիս հայկական տարբերակին և այլն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. Թվարկել եվրոպական լեզվաքաղաքականության հիմնական սկզբունքները,
2. Ներկայացնել աշխարհի լեզուների բազմազանությունը և այդ բազմազանության պատճառները,
3. Ներկայացնել ԼԻԻՀՀ-ի նպատակը,
4. Նկարագրել ԼԻԻՀՀ-ի կառուցվածքը,

5. Անվանել և նկարագրել լեզուների իմացության և իրազեկության մակարդակները ըստ ԼԻԻՀՀ,
6. Սահմանել «կոմպետենցիա» և «ենթակոմպետենցիա» հասկացությունները,
7. Ձևակերպել եվրոպական լեզվական թղթապանակի նպատակը,
8. Նկարագրել եվրոպական լեզվական թղթապանակի կառուցվածքը,
9. Ներկայացնել եվրոպական լեզվական թղթապանակի հայկական տարբերակը,
10. Թվարկել լեզուների դասավանդման և ուսուցման արդի տեխնոլոգիաները,
11. Ճանաչել թեսթավորման միջազգային համակարգերը:

Կկարողանա՝

1. Տարբերակել բնական և արհեստական լեզուները, կենդանի և մեռած լեզուները,
2. Տարբերակել եվրոպական լեզվաքաղաքականության հիմնական սկզբունքները,
3. Կիրառել ԼԻԻՀՀ փաստաթուղթը մասնագիտական գործունեության մեջ,
4. Համեմատել ԼԻԻ մակարդակները,
5. Տարբերակել կոմպետենցիաներն ու ենթակոմպետենցիաները,
6. Կիրառել տարբեր ռազմավարություններ կոմպետենցիաների զարգացման նպատակով,
7. Կիրառել լեզվական թղթապանակը՝ որպես գնահատման այլընտրանքային գործիք լեզուներ ուսուցման և դասավանդման գործընթացում:
8. Օգտագործել լեզուների դասավանդման և ուսուցման արդի տեխնոլոգիաները կրթական գործընթացում:

Կտիրապետի

1. Կիրառել ձեռք բերված տեսական գիտելիքները և գործնական հմտությունները ամենօրյա իրավիճակներում և մասնագիտական գործընթացում:
2. Օգտագործել տեղեկատվական տարատեսակ աղբյուրներ / ինտերնետ ռեսուրսներ, էլ. գրադարաններ և այլն/ հետազոտական աշխատանքներում և ամենօրյա մասնագիտական գործունեության մեջ,
3. Ստեղծագործաբար կիրառել և զարգացնել ձեռք բերված գիտելիքները և կարողությունները:

Բովանդակություն.

Թեմա1. Linguistic diversity in the contemporary world. Global and small languages. Dead languages, endangered languages.Artificial languages. **Թեմա 2.** CEFR. Multilingualism. Levels of language proficiency. CEFR. The main objective of the document. CEFR overview. Multilingualism & Bilingualism. Their reasons and types. Levels of language proficiency according to CEFR. Main levels and sublevels, their descriptors. Defining the level of language proficiency. **Թեմա 3.** Competence-based approach in language education. Notion and definition of “competence”. Communicative competence and its structure. Components of communicative competence. Competences and subcompetences. Lingustic competence as the central component of foreign communicative competence. Structure of linguistic competence. Teaching profile. Structure of professional competence of the students with pilology as major field of study. **Թեմա 4.** European language portfolio (ELP). ELP objectives. ELP functions. ELP structure. **Թեմա 5.** Contemporary approaches and methods in foreign language methodology (language education). Interactive methods of teaching foreign languages. Collaborative (cooperative) learning. Problem-based

learning in language education. Using ICT in language education. **Թեմա 6.** International testing systems: TOEFL, IELTS, etc.

2. 2 Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ

24/Մ16 – Օտար և մայրենի լեզուների զուգադրական տիպաբանություն – (4 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
1-ին կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակը.
ուսանողներին ծանոթացնել համեմատական/զուգադրական տիպաբանության հիմնարար սկզբունքներին, ճյուղերին և մեթոդներին: Դասընթացի շնորհիվ ուսանողները պատկերացում կկազմեն լեզուների տիպերի մասին, կսովորեն վերլուծել լեզուներն ըստ լեզվական տիպի: Ուսանողները մանրամասն կվերլուծեն որոշյալ, անորոշ և զրո հոդերի գործածումը անգլերենում և հայերենում, ինչպես նաև կդիտարկեն համեմատվող լեզուների բառային համակարգերը և իմաստային կապերը: Դասընթացի ընթացքում կկատարվեն համեմատական-տիպաբանական վերլուծություններ իրական օրինակների վրա, ինչը ուսանողներին թույլ կտա զարգացնել վերլուծության, համեմատության և արդյունքների ներկայացման կարողություններ:
Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա՝

1. համեմատական տիպաբանության հիմնարար սկզբունքներն ու տեսությունները:
2. լեզուների տիպերը՝ վերլուծական, կցական, թեքական և բազմահամադրական:
3. վերլուծական և համադրական կառուցվածքի լեզուների առանձնահատկությունները:
4. որոշյալ, անորոշ և զրո հոդերի դերը անգլերենում և հայերենում:
5. բառային համակարգերը և դրանց կատեգորիաները համեմատվող լեզուներում:
6. լրիվ և մասնակի իմաստային համապատասխանության, համապատասխանության բացակայության և ներառման հասկացությունները որպես իմաստային հարաբերության տեսակներ:

Կկարողանա՝

1. Վերլուծել և տարբերակել համեմատական տիպաբանության հիմնարար սկզբունքներն ու տեսությունները:
2. Բնորոշել լեզուների տիպերը՝ վերլուծական, կցական, թեքական և բազմահամադրական:
3. Տարբերակել վերլուծական և համադրական կառուցվածքի լեզուները:
4. Վերլուծել որոշյալ, անորոշ և զրո հոդերի դերը անգլերենում և հայերենում:
5. Վերլուծել բառային համակարգերը և դրանց կատեգորիաները համեմատվող լեզուներում:
6. Տարբերակել լրիվ և մասնակի իմաստային համապատասխանության, համապատասխանության բացակայության և ներառման իմաստային հարաբերությունների տեսակներ:

Կտիրապետի

1. Համեմատական տիպաբանության հիմնարար սկզբունքներին և տեսություններին:

2. Լեզուների տիպաբանության հիմնական տեսակներին՝ վերլուծական, կցական, թեքական և բազմահամադրական տիպերի առանձնահատկություններին:
3. Վերլուծական և համադրական կառուցվածք ունեցող լեզուների հիմնական առանձնահատկություններին և տարբերություններին:
4. Հայերենի և անգլերենի որոշյալ, անորոշ և զրո հոդերի գործածության և համեմատական համակարգի սկզբունքներին:
5. Հայերենի և անգլերենի բառային համակարգերի կառուցվածքային առանձնահատկություններին:
6. Հայերեն և անգլերեն որոշ բառային միավորների լիարժեք կամ մասնակի իմաստային համապատասխանությունների, համապատասխանության բացակայության կամ ներառման հարաբերությունների բովանդակությանը և վերլուծական մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. The subject and key objects of Typology, branches, connections with other linguistic disciplines. Possible directions and concepts of typological studies. A brief overview of the history of Typology. **Թեմա 2.**Comprehension of Language Type. Isolating languages. **Թեմա 3.** Polysynthetic languages. **Թեմա 4.** Agglutinative languages. **Թեմա 5.** Fusional languages. **Թեմա 6.** General and special Typologies. **Թեմա 7.** Synchronic and diachronic Typologies. **Թեմա 8.** Typological universals. **Թեմա 9.** Classification and types of universals. **Թեմա 10.** Basic concepts of Typology. **Թեմա 11**. Common linguistic concepts. **Թեմա 12.** Typological Classification of Languages. **Թեմա 13.** Traditional classifications. **Թեմա 14.** Typological classification of Edward Sapir. **Թեմա 15.** Typological classifications at the phonetic level. **Թեմա 16.**Typological classifications at the morphological level. **Թեմա 17.** Typological classifications at the syntactic level.

24/Մ10 – Թարգմանության տեսություն և պրակտիկա– (4 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
1-ին կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել թարգմանությունը որպես գիտություն: Ուսումնասիրել թարգմանության և թարգմանական գործընթացների վերաբերյալ առկա տարբեր տեսակետները: Յուրացնել թարգմանության հիմնական հասկացությունները, համարժեքությունը, տեքստի հասկացությունն ու նշանակությունը: Ուսումնասիրել բանավոր և գիրավոր թարգմանությունն ու դրանց տարատեսակները: Ուսումնասիրել թարգմանության եղանակները, թարգմանական հնարները և հստակ պատկերացնել դրանց կիրառական առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա՝

1. ինչ է թարգմանությունը, որն է դրա բնույթը, որոնք են թարգմանության տեսակները, ինչ սահմանումներ ունի թարգմանությունը, ինչ է թարգմանությունը և ինչ է մեկնաբանությունը/մեկնությունը, ինչ է մեքենայական թարգմանությունը,
2. թարգմանության վերաբերյալ առկա տարբեր տեսակետները. կենտրոնացում բնօրինակ տեքստի վրա, կենտրոնացում մեկնաբանման գործընթացի վրա, կենտրոնացում փոփոխական մեկնաբանությունների վրա. մշակութային,

գաղափարական, գրական, բնօրինակի վերափոխում և վերստեղծում, կենտրոնացում թարգմանության նպատակի վրա:

3. ինչ է համարժեքությունը և դրա վերաբերյալ ինչպիսի կարծիքներ կան,
4. ինչ է մշակութային ֆիլտրը և որն է դրա գործառույթը, ինչ սահմաններ ունի համարժեքությունը,
5. որոնք են թարգմանության և թարգմանված տեքստին վերաբերող իմպրեսիոնիստական և սուբյեկտիվ տեսակետները,
6. ինչ է իրենից ենթադրում բնօրինակ և թարգմանված տեքստերի համեմատությունը,
7. ինչ է թարգմանությունը որպես միջմշակութային հաղորդակցություն,
8. ինչպես է գործածվում թարգմանությունը մանկավարժության մեջ, որոնք են թարգմանության կողմ և դեմ պաստարկները,
9. թարգմանություն և գլոբալիզացիայի կապը:

Կկարողանա՝

1. պատկերացնել և ներկայացնել, թե ինչ է թարգմանությունը, որն է դրա բնույթը, որոնք են թարգմանության տեսակները, ինչ սահմանումներ ունի թարգմանությունը, ինչ է թարգմանությունը և ինչ է մեկնաբանությունը/մեկնությունը, ինչ է մեքենայական թարգմանությունը,
2. ներկայացնել թարգմանության վերաբերյալ առկա տարբեր տեսակետները. կենտրոնացում բնօրինակ տեքստի վրա, կենտրոնացում մեկնաբանման գործընթացի վրա, կենտրոնացում փոփոխական մեկնաբանությունների վրա. մշակութային, գաղափարական, գրական, բնօրինակի վերափոխում և վերստեղծում, կենտրոնացում թարգմանության նպատակի վրա:
3. մեկնաբանել, թե ինչ է համարժեքությունը և դրա վերաբերյալ ինչպիսի կարծիքներ կան,
4. հստակ պատկերացնել, թե ինչ է մշակութային ֆիլտրը և որն է դրա գործառույթը, ինչ սահմաններ ունի համարժեքությունը,
5. ներկայացնել, թե որոնք են թարգմանության և թարգմանված տեքստին վերաբերող իմպրեսիոնիստական և սուբյեկտիվ տեսակետները,
6. բացատրել, թե ինչ է իրենից ենթադրում բնօրինակ և թարգմանված տեքստերի համեմատությունը,
7. ներկայացնել թարգմանությունը որպես միջմշակութային հաղորդակցություն,
8. մեկնաբանել, թե ինչպես է գործածվում թարգմանությունը մանկավարժության մեջ, որոնք են թարգմանության կողմ և դեմ պաստարկները,
9. հստակ պատկերացնել թարգմանություն և գլոբալիզացիայի կապը:

Կտիրապետի

1. մեկնաբանել, թե ինչ է թարգմանությունը, որն է դրա բնույթը, որոնք են թարգմանության տեսակները, ինչ սահմանումներ ունի թարգմանությունը, ինչ է թարգմանությունը և ինչ է մեկնաբանությունը/մեկնությունը, ինչ է մեքենայական թարգմանությունը,
2. վերլուծել թարգմանության վերաբերյալ առկա տարբեր տեսակետները. կենտրոնացում բնօրինակ տեքստի վրա, կենտրոնացում մեկնաբանման գործընթացի վրա, կենտրոնացում փոփոխական մեկնաբանությունների վրա. մշակութային,

գաղափարական, գրական, բնօրինակի վերափոխում և վերստեղծում, կենտրոնացում թարգմանության նպատակի վրա:

3. մեկնաբանել, թե ինչ է համարժեքությունը և գնահատել դրա վերաբերյալ եղած կարծիքները,

4. մեկնաբանել, թե ինչ է մշակութային ֆիլտրը և որն է դրա գործառույթը, թե ինչ սահմաններ ունի համարժեքությունը,

5. մեկնաբանել թարգմանության և թարգմանված տեքստին վերաբերող իմպրեսիոնիստական և սուբյեկտիվ տեսակետները,

6. դիտարկումներ անել ենթադրում բնօրինակ և թարգմանված տեքստերի համեմատության վերաբերյալ,

7. մեկնաբանել թարգմանությունը որպես միջմշակութային հաղորդակցություն,

8. եզրահանգումներ և դատողություններ անել այն մասին, թե ինչպես է գործածվում թարգմանությունը մանկավարժության մեջ, թարգմանության կողմ և դեմ պաստարկների վերաբերյալ,

9. վերլուծել թարգմանության և գլոբալիզացիայի կապը:

Բովանդակությունը.

Թեմա 1. What is translation? The nature of translation. Kinds of translation. Translation defined. **Թեմա** 2. Translation and interpreting. Human and machine translation. Translation as communication across cultures. **Թեմա 3.** Some perspectives on translation. Focus on the original text. Focus on the process of interpretation. Focus on variable interpretations: cultural, ideological, literary. **Թեմա 4.** The irrelevance and remaking of the original. Focus on the purpose of a translation. **Թեմա 5.** Equivalence in translation. Different types of translation. The controversy over equivalence. An analytic frame work for establishing equivalence. Overt and covert translation. **Թեմա 6.** The concept and function of cultural filter. The limits of equivalence. **Թեմա 7** Views on evaluating translations. Impressionistic and subjective views. Response-based behavioural views. Target-text related views. **Թեմա 8.** Views on evaluating translations. Views based on the comparison of originals and translations. **Թեմա 9.** Analysis of the original. Comparision of original and translation. Linguistic analysis versus social judgement. **Թեմա 10.** Current issues. Translation as intercultural communication. The nature of the translation process. **Թեմա 11**.Corpus studies in translation. Translation and globalization.

23/Մ5 - Համեմատական մանկավարժություն (4 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Համեմատական մանկավարժություն /Եվրոպա, ԱՄՆ, Ասիա/ դասընթացի ներկայացվող ծրագիրը համապատասխանում է բարձրագույն ուսումնական հաստատություններում սոցիալական և կիրառական մանկավարժություն մասնագիտությամբ մագիստրոսի պատրաստմանը ներկայացվող պետական կրթական չափորոշիչի պահանջներին: Դասընթացի նպատակն է ուսանողների կողմից տարբեր երկրներում կրթական համակարգի, ուսուցման կազմակերպման ձևերի, մեթոդների վերաբերյալ տեսական ու գործնական գիտական գիտելիքների յուրացումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. Համեմատական մանկավարժության առարկան, նպատակը, խնդիրները,
2. համեմատական մանկավարժության հետազոտման մեթոդները,
3. տարբեր երկրներում կրթական համակարգերի, ուսուցման կազմակերպման ձևերի, մեթոդների մասին,
4. տարբեր երկրներում կրթական համակարգերի յուրահատկությունները, առավելությունները, դրական և թերի կողմերը,
5. ՀՀ կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների հիմնական ուղղությունները, բացթողումները:

Կկարողանա՝

1. Ուսումնասիրել և վեր հանել տարբեր երկրներում կրթական համակարգերի, ուսուցման գործընթացի կազմակերպման յուրահատկությունները,
2. բացահայտել տարբեր երկրներում կրթական համակարգերի առավելությունները, դրական և թերի կողմերը,
3. ուսումնասիրել ՀՀ կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների հիմնական ուղղությունները, բացթողումները,
4. համեմատել մասնավոր և պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առանձնահատկությունները,

Կտիրապետի՝

1. Համեմատական մանկավարժության հետազոտությունների մեթոդներին,
2. տարբեր երկրներում կրթական համակարգերի, ուսուցման կազմակերպման ձևերի ուսումնասիրման մեթոդների,
3. ՀՀ կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների արդյունքների ուսումնասիրման մեթոդներին:

Բովանդակություն

Թեմա 1. Համեմատական մանկավարժության առարկան և տեղը մանկավարժական գիտությունների համակարգում: **Թեմա 2.** Համեմատամանկավարժական հետազոտու-թյունների մեթոդները: **Թեմա 3.** Ժամանակակից աշխարհի կրթության զարգացման միտումները: **Թեմա 4.** Կրթության կառավարումն ու ֆինանսավորումը: **Թեմա 5.** Ուսուցման շերտավորումը կրթական համակարգում: **Թեմա 6.** Հեռակա ուսուցում և մեդիակրթություն: **Թեմա 7.** Միջնակարգ կրթությունը արտասահմանում: **Թեմա 8.** Կրթության մասնա—վոր հատվածը արտասահմանում: **Թեմա 9.** Մասնավոր բուհական համակարգը արևմուտքում:

23/Մ15 - Մանկավարժական հետազոտության մեթոդաբանություն (4 կրեդիտ)

Շաբաթական 7 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է.

1. ուսանողներին իրազեկել «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացի հիմունքներին,
2. զարգացնել ուսանողների գիտահետազոտական կարողությունները, ձևավորել մանկավարժական երևույթներն ու փաստերը,

3. ծանոթացնել գիտական հետազոտության հիմնական հասկացություններին, ճանաչողության ընդհանուր գիտական տրամաբանական մեթոդներին, հետազոտության տեսական և էմպիրիկ մեթոդներին, մանկավարժական տեսական և փորձարարական հետազոտության անցկացման մեթոդիկային, տվյալների մաթեմատիկական և վիճակագրական մշակման մեթոդներին,
4. նպաստել ապագա մանկավարժների կողմից մեթոդաբանական գիտելիքների տիրապետմանը, նրանց մասնագիտական որակների ձևավորմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ ձևակերպել «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացի խնդիրները, ուսումնասիրության առարկան, նպատակը, հիմնական հասկացությունները, հիմնավորել գիտական հետազոտության մեթոդաբանական սկզբունքները, իրականացնել գիտական ճանացիոողության մեթոդների դասկարգումը, հիմնավորել տեսական մեթոդների էությունն ու առանձնահատկությունները, ներկայացնել հետազոտական աշխատանքի հիմնական ձևերը,

Կկարողանա՝

1. դասակարգել մանկավարժական հետազոտության մեթոդները, աշխատել գիտամեթոդական գրականությամբ, դիտումներ իրականացնել մանկավարժական իրավիճակներում, իրականացնել անկետավորում, հարցազրույց, թեստավորում, կիրառել ընդհանուր գիտական տրամաբանական մեթոդներ, մշակել, համակարգել, մեկնաբանել մանկավարժական հետազոտության արդյունքները,ձևակերպել հետազոտության արդյունքներն ըստ առաջադրված պահանջների,

Կտիրապետի՝ գիտական հետազոտության հիմնական հասկացություններին, մանկավարժական հետազոտության գիտափորձի մեթոդին, հետազոտության արդյունքների մշակման ժամանակ կիրառվող մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներին, գիտական աշխատանքի ձևակերպման նորմերին ու կանոններին:

Բովանդակություն.

Թեմա 1. Մանկավարժական հետազոտության մեթոդաբանական հիմունքները: **Թեմա 2.** Գիտական հետազոտության հիմնական հասկացությունները, դրանց բովանդակությունը և բնութագիրը: **Թեմա 3.** Գիտական ճանաչողության մեթոդները: **Թեմա 4.** Մանկավարժական հետազոտության էմպիրիկ մեթոդները **Թեմա 5.** Մանկավարժական հետազոտությունների տեսական և պատմահամեմատական մեթոդները **Թեմա 6.** Մաթեմատիկական և վիճակագրական մեթոդները մանկավարժական հետազոտություններում: **Թեմա 7.** Մանկավարժական հետազոտությունների անցկացման մեթոդիկան; **Թեմա 8.** Հետազոտողի մանկավարժական վարպետությունը և մշակույթը:

23/Մ16 - Մանկավարժական նորարարարական տեխնոլոգիաներ (4 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակը ուսումնական գործընթացում ժամանակակից նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման մասնագիտական կարողությունների զարգացումն է:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա՝ ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքների համակարգի ձևավորման մասին:
Կկարողանա՝
1. կրթական գործընթացում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման իրագործելիությունը գիտակցաբար ընտրել և կանխատեսել բարելավման ուղիները.
2. կազմակերպել արդի պահանջներին և սեփական կրթական փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան մանկավարժական գործընթաց,
3. ապահովել պայմաններ, միջոցներ՝ ուսուցման գործընթացում սովորողների արդյունավետ զարգացման համար

Կտիրապետի ուսուցմանը, դաստիարակությանը, զարգացմանն ու սոցիալականացմանն ուղղված արդի մոտեցումների, մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառմամբ դասերի պլանավորման, իրականացման, գործընթացի կառավարման ձևերին:
Բովանդակություն.
Մոդուլ 1. Թեմա 1. Նորարարություններ կրթության մեջ: Մանկավարժական նորարարության հայեցակարգը, տեսակները: **Թեմա 2.** Դասավանդման նորարարական մեթոդներ: **Մոդուլ 2.** Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները ուսումնական գործընթացում: **Թեմա 1**. Մոդուլային վերապատրաստման տեխնոլոգիա: **Թեմա 2.** րոնման և հետազոտության տեխնոլոգիաներ. Խնդրի վրա հիմնված ուսուցում: **Թեմա 3.** Դեպքի /case ctady/ ուսումնասիրության տեխնոլոգիա, Նախագծային տեխնոլոգիա: **Թեմա 4.** Բանավեճը ուսումնական գործընթացում, «Քննադատական մտածողության զարգացման» տեխնոլոգիա: **Թեմա 5.** Խաղային գործունեության թրենինգ տեխնոլոգիա: **Թեմա 6.** Տեխնոլոգիա «մանկավարժական արհեստանոց»: Առցանց ուսուցման SMART տեխնոլոգիաներ:

23/Մ1 - Անձի հոգեբանություն - (4 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
1-ին կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը.
1. Ուսանողներն իմանան անձի կառուցվածքը, էությունը, հոգեկանի շերտերը մեկնող հոգեբանական տեսությունները:
2. Իմանան անձնային առանձնահատկությունների, անհատական տարբերությունների բացահայտման մեթոդները:
3. Բացահայտեն սեփական անձնային առանձնահատկությունների էությունը, դսևորման ձևերը:
4. Կարողանան զանազանել տարբեր իրավիճակներում մարդու կատարած վարքի հոգեբանական պատճառները:
5. Կարողանան ստացված գիտելիքները կիրառել իրենց մասնագիտական գործունեության ոլորտներում:

Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա՝ անձի էությունը մեկնող մի շարք հոգեբանական տեսությունների հայեցակարգերի բովանդակությունը:
Կկարողանա՝ բացահայտել իր էությունը, իր դրդապատճառային համակարգի, վարքային ոլորտի, անհատական տարբերությունների առանձնահատկությունները:
Կտիրապետի՝ ինքնակարգավորման, շրջակա աշխարհին բացահայտելու, աջակցելու, մոտիվանալու և մոտիվացվելու մեթոդներին, որոնք կնպաստեն և՛ անձային զարգացմանը, և՛ մասնագիտական աճին:

Բովանդակությունը.
Թեմա 1. Անձի հոգեբանության առարկան, խնդիրները, պատմական զարագացումը, **Թեմա 2**. Հոգեվերլուծություն (Զ. Ֆրոյդ), **Թեմա 3**. Վերլուծական հոգեբանություն (Գ. Յունգ), **Թեմա** 4. Անհատական հոգեբանություն (Ա. Ադլեր), **Թեմա 5**. Հոգեսոցիալական զարգացման հոգեբանություն (Է. Էրիքսոն), **Թեմա 6**. Սոցիոմշակութային տեսություն (Կ. Հորնի), **Թեմա 7**. Հումանիստական հոգեբանություն տեսությունը (Է. Ֆրոմ), **Թեմա 8**. Ուսուցողա-բիհեվիորիստական ուղղություն (Ուութսոն, Սկիներ, Բանդուրա), **Թեմա 9**. Հումասնիտական ուղղությունը (Մասլոու, Ռոջերս), **Թեմա 10**. Մոտիվացիոն տեսություններ (Ա. Մասլոու, Ալդերֆեր, Մակ-Կլելանդ), **Թեմա 11**. Կյանքի սցենարները (Է. Բեռն), **Թեմա 12**. Անձնային առանձնահատկություն: Անհատական տարբերություններ: **Թեմա 13**. Խառնվածք, բնավորություն:

3. Հետազոտական կրթամաս

0104/Մ22- Գիտահետազոտական աշխատանք – (24 կրեդիտ)
1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը.
Գիտահետազոտական աշխատանքի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ինքնակրթության և ինքնազարգացման, մասնագիտական որակների բարձրացման և որոնողական-հետազոտական ինքնուրույն գործունեությունը կազմակերպելու սկզբունքներին, ուսանողների մոտ ձևավորել մասնագիտական գրականություն ուսումնասիրելու, ուսանողներին հասցեագրվող նյութերն առանձնացնելու, դրանք ուսանողների ինքնուրույն գործունեությանը ծառայեցնելու կարողություն:
Գիտահետազոտական աշխատանքի իրականացման արդյունքում ուսանողը.
Կիմանա՝ դասախոսությանը (սեմինարին, գործնական աշխատանքին) նախապատրաստվելու սկզբունքները, ձևերը և եղանակները, հենց լսարանում տվյալ թեմայից գիտելիք ստանալու և հաղորդելու սկզբունքներն ու մեթոդները, ուսանողների մասնագիտական կարողությունները և հմտությունները ձևավորելու և զարգացնելու մեթոդները, ուսանողների հետ գիտական-մեթոդական, մասնագիտական առումներով համագործակցելու և շփվելու սկզբունքները, ուսանողների որոնողական-հետազոտական ինքնուրույն գործունեությունը ղեկավարելու սկզբունքները,
Կկարողանա՝ անհրաժեշտ նյութեր (էլեկտրոնային և տպագիր) հավաքել և նախապատրաստվել դասախոսությանը, սեմինարին կամ գործնական աշխատանքին, ապահովել մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացումը, լսարանում աշխատեցնել ուսանողներին՝ կիրառելով ուսուցման ակտիվ մեթոդներ, խթանել ուսանողների որոնողական-հետազոտական գործունեություն ծավալելու կարողությունը, համագործակցել ուսանողների հետ մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացում,
Կտիրապետի՝ տվյալ դասընթացի ուսումնասիրության կազմակերպման սկզբունքներին, մասնագիտական գրականություն ուսումնասիրելու, ուսանողներին հասցեագրվող նյութեր առանձնացնելու, դրանք ուսանողների ինքնուրույն գործունեությանը ծառայեցնելու կարողությանը, ուսանողների հետազոտական գործունեությունը խթանելու և ղեկավարելու սկզբունքներին, ինքնակրթության և ինքնազարգացման, մասնագիտական գիտելիքների հարստացման սկզբունքներին, համացանցից, ուսուցման նորագույն միջոցներից օգտվելու և

ուսանողներին այդ ուղղությամբ համապատասխան ցուցումներ տալու ձևերին և եղանակներին:

Գիտահետազոտական պրակտիկա- 6 կրեդիտ
3-րդ կիսամյակ, ստուգարք
Նպատակը.
Գիտահետազոտական պրակտիկայի նպատակն է մագիստրանտների մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացումը, համակարգումը և ամրագրումը, նրանց մոտ ինքնուրույն գիտական աշխատանք, հետազոտություններ և փորձարկումներ կատարելու կարողությունների ձևավորումը:
Պրակտիկայի արդյունքում ուսանող տիրապետում է.
- գիտական հետազոտություններն ինքնուրույն պլանավորելու և իրականացնելու կարողությունների,
- գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանության հիմնական դրույթների և դրանք մագիստրոսական թեզի պատրաստման աշխատանքներում կիրառելու կարողությունների,
- մասնագիտական գրականության ուսումնասիրության ու աղբյուրագիտական աշխատանքներ իրականացնելու և այդ ոլորտում տեղեկատվության ու հաղորդակցության միջոցներն ու տեխնոլոգիաները կիրառելու կարողությունների,
- գիտական հետազոտությունների մեթոդներն ընտրելու, դրանք հետազոտության նպատակներին և խնդիրներին համապատասխանեցնելու և կիրառելու կարողությունների,
- գիտական տեղեկույթ հավաքելու, վերլուծելու, համակարգելու և մշակելու ժամանակակից մեթոդների օգտագործման կարողությունների,
- հետազոտությունների ընթացքում ծագած խնդիրները լուծելու կարողությունների,
- հետազոտությունների արդյունքները մշակելու կարողությունների,
-հետազոտության թեմային վերաբերող նյութերը հաշվետվությունների, տպագրությունների, զեկուցումների ձևով շարադրելու կարողությունների,
- իրականացրած հետազոտությունը ներկայացնելու և իր առաջադրած դրույթները պաշտպանելու կարողության:

Գիտամանկավարժական պրակտիկա - (6 կրեդիտ)
4-րդ կիսամյակ, ստուգարք
Պրակտիկայի նպատակը.
Գիտամանկավարժական պրակտիկայի նպատակն է ուսանողների մեջ ձևավորել բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցման գործընթացի նախագծման, պլանավորման, իրականացման, արժևորման և գիտամեթոդական հետազոտություններ իրականացման հմտություններ:
Պրակտիկայի ավարտին ուսանողը.
Կիմանա՝ բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատության փաստաթղթերի բովանդակությունը և կառուցվածքը, ուսուցման մեթոդների և արդի տեխնոլոգիաների կիրառման պայմանները և ձևերը, դասընթացի ծրագրի բովանդակությունը, ուսումնական պարապմունքների տիպերը, կառուցվածքը, առանձնահատկությունները, դասընթացի նախապատրաստման և անցկացման մեթոդիկան, դասախոսի ուսումնական աշխատանքի պլանավորման սկզբունքները, ուսանողական ինքնավարության զարգացման մակարդակները և դրանց ձևավորման ուղղությամբ դասախոսի գործունեությունը, ուսանողների հետ շփման ոճերը:
Կտիրապետի՝ իր մանկավարժական և գիտամանկավարժական գործունեությունը ծրագրելու, վերլուծելու, դասախոսի ուսումնական գործունեությունը դիտելու և վերլուծելու, ուսումնական պարապմունքի ընթացքն արձանագրելու, դրանք ըստ առանձին

բաղադրամասերի վերլուծելու, ուսումնական աշխատանքի կազմակերպման մեթոդների, միջոցների և ձևերի կիրառման, մեթոդական և գիտամեթոդական ուսումնասիրություններ իրականացնելու, սեփական մանկավարժական գործունեությունը վերլուծելու և գնահատելու հմտություններին, պատշաճ կերպով շփվել ուսանողների հետ և հետևել նրանց գործունեությանը, իրականացնել ախտորոշման (դիագնոստիկ) և մշտադիտարկման (մոնիթորինգային) աշխատանքներ, վերլուծել ուսումնական պլանը, առարկայական ծրագիրը, դասագիրքը, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները կանխատեսելու մեթոդներին, եղանակներին, կատարել դասալսումներ, կազմակերպել դրանց քննարկումներ, ինքնուրույն նախագծել, նախապատրաստել, կազմակերպել, անցկացնել դասեր, արտալսարանային պարապմունքներ, դաստիարակչական միջոցառումներ, գնահատել կատարված աշխատանքները, աշխատել՝ համագործակցելով գործընկերների հետ, իրականացնել ուսումնական գործընթացի մշտադիտարկում, կանխատեսել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները:

Մագիստրոսական թեզի պաշտպանություն – 12 կրեդիտ
4-րդ կիսամյակ, քննություն
Նպատակը.
Մագիստրոսական թեզի պատրաստման նպատակն է մասնագիտական գիտելիքների խորացումը, համակարգումը, ուսանողների մոտ ինքնուրույն գիտական աշխատանք, հետազոտություններ կատարելու կարողությունների ձևավորումը:
Մագիստրոսական թեզի ուղղությամբ աշխատանքներ ծավալելու գործընթացի արդյունքում ուսանողը.
Կիմանա՝ տվյալ թեմայի շուրջ մասնագիտական գրականություն հավաքագրելու ուղիները, հավաքած նյութերը խմբավորելու, դասդասելու և համակարգելու սկզբունքները, թեզի թեմային առնչվող նյութերի մշակման սկզբունքները, աշխատանքի պլան կազմելու և իր դիրքորոշումները, գաղափարները, առաջարկությունները շարադրելու սկզբունքները, շարադրանքի մեջ տարբեր հեղինակներից մեջբերումներ անելու, եզրահանգումներ կատարելու սկզբունքները:
Կկարողանա՝ օգտվել համացանցից և տպագիր նյութերից, հավաքել իր թեմային վերաբերող նյութեր, մշակել իրեն անհրաժեշտ աղբյուրները, նշումներ կատարել սկզբնաղբյուրների մասին, իր մտքերը շարադրել հստակ և գրագետ հայերենով, գիտական ոճին բնորոշ սկզբունքներով, կատարել համապատասխան դիտարկումներ և ուսումնասիրություններ:
Կտիրապետի՝ ինքնուրույն գիտական աշխատանք, հետազոտություններ կատարելու սկզբունքներին:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների քարտեզագրումը՝ ըստ դասընթացների վերջնարդյունքների

h/h	Դասընթացներ/կրթական մոդուլներ		Կոմպետենցիաներ																			
		Մոդուլի կրեդիտը	Մասնագիտական գիտելիք և իմացություն							Գործնական մասնագիտական կոմպետենցիաներ							Ընդհանրական կոմպետենցիաներ					
			Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ 5	Բ 6	Բ 7	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6
1.	Գերմաներենը որպես II օտար լեզու	2	+			+	+			+			+	+				+	+			
2.	Գիտահետազոտական աշխատանքի մեթոդաբանություն	2	+	+					+	+	+					+	+	+		+		+
3.	Տեղեկատվական տեխնոլոգիաները և արհեստական բանականությունը մասնագիտական հետազոտություններում	2	+						+	+						+		+				
4.	Ներառական կրթության մանկավարժություն և հոգեբանություն	4			+				+			+				+				+		
5.	Կրթության համակարգի կառավարում	4	+	+						+	+						+		+		+	+
6.	Մանկավարժական արժեբանություն	4			+							+						+	+			+
7.	Մանկավարժական հաղորդակցություն	4					+							+					+			

8.	Անգլերենը ակադեմիական նպատակների համար- 1,2,3	3+3+3	+			+	+			+			+			+	+	+			+	+
9.	Մասնագիտական օտար լեզվի զարգացում- 1,2,3,4	3+3+3+2	+	+		+	+			+	+		+	+			+	+	+	+	+	+
10.	Գործարարական անգլերեն	3	+	+		+	+		+	+	+		+	+		+	+	+	+	+	+	+
11.	Միջմշակութային հաղորդակցություն	3		+		+	+		+		+		+	+		+	+	+	+	+	+	+
12.	Գիտագործնական փաստարկման հիմունքներ	3	+	+					+	+	+					+	+	+		+		+
13.	Անգլախոս երկրների գրականություն	3					+	+						+	+		+	+				
14.	Անգլիական վեպի պատմություն	3					+	+						+	+		+	+				
15.	Բազմալեզվադիդակտիկա	2		+		+	+		+		+		+	+		+	+	+	+		+	+
16.	Օտար և մայրենի լեզուների զուգադրական տիպաբանություն	4					+		+					+		+	+	+	+			
17.	Թարգմանության տեսություն և պրակտիկա					+	+						+	+		+	+	+	+			
18.	Համեմատական մանկավարժություն	4			+							+				+	+	+	+			
19.	Մանկավարժական հետազոտության մեթոդաբանություն		+	+	+				+		+	+				+	+	+	+	+	+	+
20.	Մանկավարժական նորարարարական տեխնոլոգիաներ	4	+		+				+	+		+				+	+	+	+	+	+	+
21.	Անձի հոգեբանություն				+				+			+				+	+				+	+

22.	Գիտահետազոտական աշխատանք 1,2,3,4	24	+	+	+				+	+	+	+				+	+	+	+	+	+	+
23.	Գիտահետազոտական պրակտիկա	6	+	+	+				+	+	+	+				+	+	+	+	+	+	+
24.	Գիտամանկավարժական պրակտիկա	6	+	+	+	+			+	+	+	+	+			+	+	+	+	+	+	+
25.	Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+